XXIII

# ՆՈՐ-ԴԱՐ

XXIII

№ 43 Հինգշաբթի, 9 Մարտի

1883 — 1906

Հինգշաբթի, 9 Մարտի № 43

Բաժանորդագինը պոստի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։
Խմբագրութեան գրասենեակը՝ Գրիբոեդովսկայա փողոց, տուն № 14.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար առանձին համաձայնութեամբ։ Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է։

## 1906

# ՆՈՐ-ԴԱՐ

(ՔՍԱՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Սոյն 1906 թուին լոյս է տեսնում քաղաքական-գրական ամենօրեայ «Նոր-Դար»-ը նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։

Ամբողջ ռուս կայսրութեան մէջ «Նոր-Դար»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ր., վեց ամսուանը՝ 6 ր., ամսականը՝ 1 ր., հատով՝ 5 կ.։ Արտասահմանի բաժանորդը վճարում է տարեկան՝ 40 ֆրանկ, վեց ամիսը՝ 25 ֆրանկ։

Յայտարարութիւններ ընդունւում են և օտար լեզուներով, բառը 2 կ., առաջին երեսումը 4 կ.։ Շատ անգամ կրկնուող յայտարարութիւնների համար մեծ զիջումն։

Բաժանորդ գրւում են Թիֆլիսում՝ «Նոր-Դար»-ի գրասենեակում, Գրիբոեդովսկայա փողոցում, № 14.

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն՝ Тифлисъ, ред. „Норъ-Даръ“ կամ՝ Tiflis (Caucase), rédaction «Nor-Dar».

Ծանուցումն.—Թերթիս խմբագիրը մի տարի առաջ Պետերբուրգում իրաւունք է ստացել ընդարձակելու թերթի ծրագիրը, տալով թերթի մէջ պատկերներ, և առանձին ծրագրով լոյս հանելու շաբաթական պատկերազարդ յաւելուած։ Հարկ ենք համարում ծանուցանելու՝ հէնց որ թերթի միջոցները ներեն, կըձեռնարկենք պատկերազարդ «Նոր-Դար»-ի հրատարակութեան և կուղարկենք «Նոր-Դար»-ի բաժանորդներին 10 րուբլի բաժանորդագնի հաշւում։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ.— Երկու խօսք Բագուի ապագայ քաղաքապետութեան մասին։
ՔՐՈՆԻԿՈՆ.—Թիֆլիս։ Գաւառ։ Ռուսիա։
Մեզ գրում են.—Ս. Էջմիածնից։ Գետաշէնից։ Քարինտակից։ Բագուից։
Հայ-Թաթարական համաժողովը Թիֆլիսում։
Փոխարքայի խօսքը համագումարի վերջում։
ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ։
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.—Ս. Էջմիածին։
Նամակներ Քիշնևից։
Նամակներ խմբագրութեան։
ՔԱՂԱՔԱԿԱՆ.— Արտասահմանեան մամուլը Ռուսիայի մասին։ Ֆրանսական մինիստրութեան անկումը։
«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ։
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անգլիայի պետական կազմը։
ՏԵՂԵԿԱՏՈՒ։
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Թիֆլիս 8, մարտի 1906 թ.

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԲԱԳՈՒԻ ԱՊԱԳԱՅ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բագուի անցեալ տարուայ օգոստոսի հայ-թրքական ընդհարումներից անմիջապէս յետոյ, կովկասեան վարչական բարձրագոյն շրջաններում միտք յղացաւ Բագու հաստատել քաղաքապետութիւն։ Այդ միտքը, որ յետոյ պաշտօնական որոշման կերպարանք ստացաւ, ծնունդ էր առել նաւթահանքերում տեղի ունեցած անօրինակ հրդեհների սոսկալի արհաւիրքների թարմ տպաւորութեան տակ։ Քաղաքապետութիւնը համարւում էր այն միակ միջոցը, որ պէտք է կարողանար այդ քաղաքի թուրք բնակչութեան՝ գազանութեան հասնող բարբարոսական բնազդները սանձահարել և նաւթի քաղաքին տալ ցանկալի ապահովութիւնն ու խաղաղութիւնը։

Բագու քաղաքապետական դրութեան վերածելու միտքը նոր ու առաջինը չէր։ Ամբողջ մի տարի ողջ Ռուսիան հիմքից դղրդեցնող հսկայական դէպքերը ռուս կառավարութեանն ստիպել էին այդ դրութեանը դիմել կեդրոնական Ռուսիայի ուրիշ քաղաքների վերաբերմամբ ևս։ Երկրի թարախալից վէրքերը բուժելու ընդունակ համարւող քաղաքապետական դրութիւնը հաստատուել էր Մոսկուա, Օդեսսա, Պետերբուրգ և ուրիշ քաղաքներ։

Սակայն ինչ բարի հետևանքներ ունեցաւ այդ բացառիկ դրութիւնն այն քաղաքների նկատմամբ, ուր նա ընդգրկուած էր կառավարութեան կողմից որպէս ամենակարող գործօնը ժողովրդական հուժկու խլրտումները զսպելու գործում։

Ամենևին ճշմարտութեան դէմ մեղանչած չենք լինիլ, եթէ ասենք, որ քաղաքապետական դրութիւնն առանձնապէս ոչինչ չէ արել այդ քաղաքների խանգարուած հանրային կարգն ու խաղաղութիւնը վերականգնելու վերաբերութեամբ։

Քաղաքապետութեան հրատարակուելուց յետոյ էր, որ Մոսկուայում տեղի ունեցան անցեալ դեկտեմբերի ռուսական զինուած ապստամբութեան պատմական ամենախոշոր դէպքերը։ 1905 թուի երկու մեծ համառուսական ընդհանուր գործադուլներն առաջ են եկել Պետերբուրգ և Մոսկուա քաղաքները քաղաքապետական իշխանութեան ենթարկուելուց յետոյ։ Հապա Ռոստովում և Օդեսսայում քաղաքապետութեան օրերում չէ՞ին դարձեալ, որ տեղի ունեցան անցեալ հոկտեմբերեան հրէական սոսկալի սասանեցուցիչ կոտորածներն ու թալանները։

Այս մի քանի օրինակները քաղաքապետական դրութեան նկատմամբ այնքան պերճախօս ապացոյցներ են, որ դժուար է այլևս տարակուսել ռուս բիւրոկրատիայի առաջ քշած վարչական այդ եղանակի աննպատակ ու ամուլ մի դրութիւն լինելու մասին։

Եւ վերջապէս վարչական ո՞ր եղանակն է այն, որ, լիովին հաւատարիմ մնալով բիւրոկրատիական աւանդական մեղսալից քաղաքականութեանը, ստորադրուած մնալով նրա անբովանդակ ու սնամէջ քաղաքականութեանը, կարողացած լինի կամ կարողանայ մի տանելի դրութիւն ստեղծել այս կամ այն քաղաքի համար, երկրի այս ծայրայեղ տագնապալից պայմանների տակ։

Կառավարութեան այս կամ այն ձևը չի կարող ոչինչ անել այն բոլոր դէպքերում, ուր պետական նաւը ղեկավարելու կոչուած բարձր իշխանութիւնն անկեղծ չէ դէպի ժողովուրդն ու նրա անբռնաբարելի իրաւունքների վրայ նայում է մատների միջից... Եթէ ընդ. նահանգապետութիւնը կամ քաղաքապետութիւնը չեն կարողանում ցանկացուած նպատակին հասցնել—երկիրը խաղաղեցնել, դրանում մեղաւորը կառավարութեան այս կամ այն ձևը չէ, այլ այն ոգին, այն ուղղութիւնը, այն տակտիկան, որը բարձրից ներշնչւում է նրանց։

Ենթադրւում է, թէ քաղաքապետութիւնը կարող կը լինի երկու ընդի թշնամացուած ժողովուրդները հաշտեցնել և քաղաքն ազատել այդ թշնամութեան յօշոտիչ ճիրաններից։

Դա խոշոր սխալ է, բացարձակ ինքնախաբէութիւն է։

Ինչպէս Բագուն, նմանապէս և ամբողջ Անդրկովկասը հայ-թաթարական սոսկալի մղձաւանջից կազատուի այն օրից, այն րոպէից, երբ նախ Պետերբուրգի և ապա կովկասեան բարձր իշխանութիւնն այդ կը ցանկանայ անկեղծօրէն։ Կոտորածները մինչև այժմ շարունակուել են, որովհետև կառավարութիւնը դէմ չէ եղել այդ բանին, ինքը յետ է քաշուել.., և կը վերանան, ու միշտ կը լռեն այն ժամանակ, երբ կառավարութիւնն անդառնալի կերպով կը վճռի իր այդ քայլը։

Այս լինելով մեր խորին համոզմունքը, մենք միանգամայն աննպատակ կարգադրութիւն ենք համարում Բագուն քաղաքապետութեան վերածելու միտքը, որի հետ կապուած է 1,100,000 ր. նոր ծախս, իսկ այդ ամբողջովին պէտք է ծանրանայ առանց այն էլ արիւնքամ, ուժասպառ եղած բնակչութեան շլինքին։

Քաղաքապետութիւնը չի կարող դրութիւնը փոխել, եթէ կառավարութիւնը կը շարունակի հետևել իր նախկին քաղաքականութեանը։ Իսկ եթէ այդ քաղաքականութիւնը յիրաւի փոխուել է, ինչպէս ցոյց են տալիս նշանները, այն ժամանակ քաղաքապետութեան այլևս ոչ մի պահանջ, կարիք չի մնում։

## ՔՐՈՆԻԿՈՆ

### ԹԻՖԼԻՍ

Մարտի 4-ին փոխարքայի պալատի Սպիտակ դահլիճում լուսանկար Կար հանեց հայ-թրքական համաժողովի լուսանկարը։ Առաջին տեղում նստած էր փոխարքայ գրաֆ Ի. Ի. Վարանցով-Դաշկովը, մի կողքին նրա օգնական գեն. Մալաման, միւս կողքին միւս օգնական պ. Սուլթան-Կրիմ-Գիրէյը, ապա աջ ու ձախ կողմերը տեղաւորուած էին փոխարքայի խորհրդի անդամները, նահանգապետները և ադմինիստրացիայի ուրիշ ներկայացուցիչներ, նմանապէս և պատգամաւորներից մի քանիսը։ Սրանք կազմում էին առաջին շարքը, իսկ ետևի շարքերում կանգնած էին համաժողովի հայ և թուրք պատգամաւորները, նմանապէս և մամուլի ներկայացուցիչները խառն կերպով։

—Մարտի 5-ին փոխարքայի պալատում հայ-թրքական համաժողովի անդամների պատուին տրուած ռաուտը սկսուեց երեկոյեան ժամը 9-ին և տևեց գրեթէ մինչև կէս գիշեր։ Հրաւիրեալները հիւրասիրուեցին թէյով, ուրիշ խմիչքներով և ամեն տեսակ անուշեղէններով։ Փոխէ փոխ նուագում և երգում էին զինուորական երաժշտական և կազակների երգեցիկ խմբեր։ Հայ պատգամաւորներն իրենց կողմից և թուրք պատգամաւորներն իրենց կողմից մի-մի շքեղ ծաղկեփունջ մատուցին փոխարքայի ամուսնուն գր. Ե. Ա. Վարանցովա-Դաշկովային։

—Թիֆլիսի նահանգապետը քաղաքագլխին առաջարկել է դադարեցնել քաղաքումս վերջին անկարգութիւնների ժամանակ վնասուածների օգտին 5000 ր. յատկացնելու համար քաղաքային խորհրդի կայացրած որոշման կատարումը և յայտնել իրեն, թէ ինչ անկարգութիւններ են այդ և ում պէտք է յատկացուի յիշեալ 5000 րուբլին։

— Ներսիսեան դպրոցին պատկանեալ այրուած շէնքի տեղ Սալդատսկի բազարում նոր շէնք կառուցանելու խնդիրը թողնուած է դպրոցի ապագայ հոգաբարձական կազմի որոշման։ Նոր հոգաբարձութեան ընտրութիւնները լինելու են մայիսին։

—Կովկասեան հեծեալ զօրքերի դիվիզիայի հրամանատար գեն.-մայոր պրինց Լիւդովիկ Նապոլէոնն արձակուած է այդ պաշտօնից և, 11 ամսուայ արձակուրդ ստանալով, գնում է արտասահման։

—Քաղաքային խորհրդի իրաւասու Ա. Բ. Եւանգուլեան Մետեխի բանտից մի յայտարարութիւն է ուղարկել քաղաքային վարչութեանը, որի մէջ ասուած է, թէ Պետական Դումայի ընտրութիւնները կանոնաւորապէս կատարելու համար անհրաժեշտ է խնդրամատոյց լինել, որ վերացուի Թիֆլիսում պատերազմական դրութիւնը և մամուլի ու ժողովների ազատութիւն տրուի։

—Որովհետև Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցը լիքն է հիւանդներով և նոր հիւանդների համար տեղ չկայ, բժշկական վարչութիւնը դիմել է քաղաքային վարչութեանը, որ քաղաքային ժամանակաւոր հիւանդանոց բանայ կամ թէ քաղաքային բուժարաններին կից հիւանդների օթևաններ հիմնէ։

— Թիֆլիսում կազմւում է ծնողական կեդրոնական խորհուրդ, որի նպատակն է միացնել տեղական միջնակարգ դպրոցներում գոյութիւն ունեցող ծնողական խորհուրդների գործունէութիւնը։ Կեդրոնական խորհրդի մէջ մանելու են վերջիններից ընտրուած պատգամաւորներ։

— Մտադրութիւն կայ Թիֆլիսում աւելացնելու փոստարկղների թիւը և մի քանի փոփոխութիւններ մտցնելու նամակները տուն հասցնելու վերաբերմամբ։

—Ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետի կարգադրութեամբ Մետեխի բանտից արձակուած են Յովհաննէս Սարգսեան և Ալէքսանդր Յովսէփեան, որոնք ձերբակալուած էին յունուարին երկաթուղային ոստիկանութեան ձեռքով։

—Երեկ, մարտի 8-ին, Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկում աճուրդ էր նշանակուած ծախելու համար 377 կալուածք, որոնք գրաւ էին դրուած յիշեալ բանկում։

—Թիֆլիսի վաճառականների ընդհանուր ժողովում, մարտի 5-ին, աւագի պաշտօնի համար ընտրուեց Ի. Ա. Շաղինեան. իբրև օգնականներ ընտրուեցին Ա. Ն. Միլեան և Վ. Ս. Եղիազարեան։

—Խուզարկութիւնները շարունակւում են Թիֆլիսում. մարտի 7-ին քաղաքիս Ս. Դաւթի լեռան ստորոտում գտնուող փողոցների տուները խուզարկուեցին։ Մի տնից մի խենջալ գտան ու գրաւեցին։

— Յանձնուած է թեմիս ս. առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսին Մանգլիսից մեզ ուղարկուած (Նուիրաբերութիւններ) 21 ր. 50 կ.։

— Տաշքենդից Ս. Խաչատրեան հայ-թաթարական ընդհարումների զոհերի օգտին ուղարկել է մեզ 10 ր.։ Այդ գումարը նոյնպէս յանձնուած է թեմիս ս. առաջնորդին։

— Նոյնպէս յանձնուած է նոյն նպատակի համար Անուշաւան Աբովեանից ստացուած 3 ր.։

— Լ. Փ. Տիգրանեան նահանգապետից թոյլտուութիւն է խնդրում Թիֆլիսում հրատարակելու ռուսերէն լեզուով ամենօրեայ մի լրագիր «Наша Жизнь» անունով։

— Տիկ. Դաւիդովա նորից իրաւունք է խնդրում Թիֆլիսում հրատարակելու ռուսերէն ամենօրեայ մի լրագիր «Кавказскій Вѣстникъ» անունով։

— Բ. Ս. Երիցեան նորից դիմել է նահանգապետին թոյլտուութիւն խնդրելով Թիֆլիսում հրատարակելու 1) ռուսերէն լեզուով երգիծաբանական երկշաբաթաթերթ «Жгутъ» անունով և 2) հայերէն լեզուով գրական երկշաբաթաթերթ «Թատրոն և Գեղարուեստ» անունով։

### ԳԱՒԱՌ

— Գանձակի գաւառի Դալլար գիւղի բնակիչները հրաժարուել էին իշխանութեան ձեռքը յանձնել աւազակներին ու զէնքը և իրենք փախել էին անտառները. այս պատճառով ուղարկուած զօրքը թնդանօթի 11 հարուածով ռմբակոծեց յիշեալ գիւղը՝ վնասուեց մի քանի տուն. մարդկային զոհեր չկան։ Դրանից յետոյ գիւղացիները վճարեցին բոլոր տուրքերը, վերադարձրին Ղազախի գաւառից քշած տաւարը, խոստացան վերադարձնել յափշտակուած երկաթուղային ապրանքների մի մասը, իսկ մնացած մասը փողով վճարելու համար պարտամուրհակ տուան։ («Кав.»)։

— Հաստատուած է, որ Եւլախի և Բարդայի միջև հանրակառքերը կողոպտել են թուրք աւազակներ Սիբիրից փախած Ուզար-Մահմէդ Նեֆթալի-օղլու առաջնորդութեամբ։ Այդ աւազակները թագնուել են Գանձակի գաւառի սահմաններում։ Նրանց բռնելու և թալանը յետ խլելու համար միջոցներ են ձեռք առնուած։

— Բաթումի ժամ. ընդհանուր-նահանգապետ գեն. Ալիխանովը հեռագրում է փոխարքային մարտի 3-ից. «Պատիւ ունիմ զեկուցանելու ձերդ պայծառափայլութեանը, որ այսօր ես ստանձնեցի պատերազմական դրութեան մէջ յայտարարուած Սուխումի շրջանի կառավարութիւնը, որի մասին յայտնեցի այնտեղի հասարակութիւններին, զօրքերին և բնակչութեանը»։

—Սուխումի շրջանը պատերազմական դրութեան մէջ յայտարարելու պատճառն այն է, որ Սև ծովի և Քութայիսի նահանգներից բոլոր նշանաւոր յեղափոխականները փախել և թագնուած են յիշեալ գաւառում։ («Кав.»)։

—Գանձակում մարտի 6-ին սապեօրների բատալիոնի մի զինուոր հրացանով սպանել է մի զինուած հայի, որ հրացանն է պարզել պահակի վրայ։ («Совр.»)։

—Վերջերս Ռուսիայի ներքին նահանգներից Կարսի շրջանը գաղթած ռուս գիւղացիներ խումբ-խումբ յետ են դառնում իրենց ծննդավայրը։

—Երևանի նահանգական դատարանն արդարացրել է 30 հայերի, որոնք զինուած անցել էին ռուսաց սահմանը։ («Т. Л.»)։

— Իգդիրում մարտի 3-ին քննուեց Սուրմալուի գաւառապետ Բոգուսլավսկու սպանութեան գործը, որի համար բռնուած էին հինգ հոգի։ Բոլորն էլ արդարացած են։

—Այս օրերս Արէշի գաւառում զինուած թուրքեր յարձակուել են տեղական կալուածատէր Սարգիս-բէկ Կարախանեանի հովիւների վրայ Լեամբաթի գիւղի հանդերում և քշել են 200 գլուխ ոչխար։ Վնասը հասնում է 900 րուբլու։

—Գանձակում մարտի 5-ին թուրքերը վերադարձրել են գերուած մի հայ կին և երեք երեխայ։

— Կովկասի իշխանութեան կարգադրութեամբ 974,000 ր. է յատկացուած Սև ծովի կովկասեան ափերում ռուս գաղութներ հաստատելու համար։ Այդ նպատակով Ռուսիայի ներքին նահանգներից պիտի բերուի առ այժմ 20 հազար ընտանիք։

— Սուխումում այս օրերս ձերբակալուած է վրացի գրող Թէոդորէ Սախոկիա։

— Քութայիսի նահանգապետն այլ ևս ոչոքի անցաթուղթ չի տալիս արտասահման գնալու համար։ («Совр.»).

### ՌՈՒՍԻԱ

Մոսկուայի համալսարանի վերջին կուրսի ուսանողների կողմից մի պատգամաւորութիւն այս օրերս ներկայացաւ ռեկտոր Մանուիլովին և խնդրեց, որ համալսարանը բացուի անյապաղ, թէև խորհուրդը վճռել է համալսարանը բանալ Զատկից յետոյ միայն։ Ռեկտորը պատասխանեց, որ դժուար թէ խորհուրդը փոխի իր վճիռը, բայց և այնպէս ուսանողների խնդիրը կը յայտնի խորհրդի մերձաւոր նիստին։ Այդ նիստը պիտի կայանար մարտի 3-ին։

— Մոսկուայում յայտնի Կուշներևի ահագին տպարանի բանուորները հրաժարուել էին Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելուց։ Որովհետև թէ ոստիկանութիւնը և թէ տպարանի վարչութիւնն սկսել էին զօրեղ ճնշում գործել նրանց վրայ ստիպելու համար, որ մասնակցեն ընտրութիւններին, նրանք դիմեցին մի տարօրինակ ցոյցի—լիազօր ընտրեցին մի խուլ-համր բանուորի։

— Երկաթուղային ծառայողների յուզուած դրութեան պատճառով Նիկոլաևսկի երկաթուղու կայարանը Մոսկուայում պահպանւում է զօրքերով։

—Այս րոպէին Մոսկուայի բանտերում տառապում է 2000-ից աւելի քաղաքական յանցաւոր։ Նրանք հրաժարուել են կերակրից իրենց գործի քննութիւնը շտապեցնել տալու համար։

—Մոսկուայում կազմակերպել է ազնուականների մի կուսակցութիւն, որի նշանաբանն է «հայրենիքի փրկութիւնը» և «բացառապէս ազնուականների շահերի պաշտպանութիւնը»։ Առաջին կէտն երևի բղխում է երկրորդից, կամ ընդհակառակը։

—Ելիսաւետգրադում «ռուս ժողովրդի միութեան» ժողովում Ստեփանովիչ քահանան մի ճառ խօսեց իսկական քրիստոնէական իմաստով։ Ճառը դիւր չեկաւ ժողովականներին, և նրանք այնպիսի մի օյին հանեցին միամիտ քահանայի գլխին, որ նա ստիպուած եղաւ փախչել։

—Պետական Դումայի պատգամաւորների ընտրութիւններին մասնակցելու համար Մոսկուայի գործարաններում և արհեստանոցներում իբրև լիազօր ընտրուած են չափաւոր աջակողմեանները։ Պրոխորովի գործարանում բանուորները ծեծեցին մի ագիտատորի։ Մոսկուայի գաւառի գործարաններում լիազօր ընտրուած են մեծ մասամբ ծայրայեղ կուսակցութիւնների պատկանող բանուորներ։ Գրեթէ ամեն տեղ թռուցիկներ էին ցրւում և բաժանւում էին սոցիալ-յեղափոխականների պատրաստած բողոքները Պետական Դումայի դէմ։ Սակայն այս մտքով եղած ագիտացիան յաջողութիւն չունեցաւ։

—Ստաւրոպոլի նահանգում գիւղական մի նոր զօրեղ շարժում է սկսուել։ Գիւղացիները չեն ուզում բանել կալուածատէրերի մօտ և առհասարակ խիստ թշնամական դիրք են բռնել նրանց վերաբերմամբ։

—Կովնայի նահանգում գիւղական համայնքներից մէկում իբրև Պետական Դումայի պատգամաւոր ընտրող լիազօր ընտրուած էր համալսարանական դիպլոմ ունեցող մի մարդ։ Իշխանութիւնը չի հաստատել այդ ընտրութիւնն այն պատճառաբանութեամբ, որ ընտրուածը համալսարանական է, հետևաբար և չի պատկանում գիւղական դասակարգին։

— Տպագրական գործի բանուորների միութիւնը Պետերբուրգում վճռել է գումարել տպագրական գործի բանուորների համառուսական մի ժողով մշակելու համար տպագրական գործի բանուորների համառուսական միութեան կանոնադրութիւն։ Մոսկուայի միութիւնն այն կարծիքն է յայտնել, որ ներկայումս, ի նկատի առնելով կառավարութեան բռնած ընթացքը, անկարելի է այդպիսի մի համաժողով գումարել։

— Կազանում ձերբակալուած են իբրև քաղաքական յանցաւոր 15 ընկեր։ Նրանք ուղարկուած են սահմանի վրայ գտնուած բերդերից մէկը։

— Կառավարութիւնն 9,000 ր. է յատկացրել Եկատերինոդարում ժամանակաւոր բանտ շինելու համար։

— Հոմէլի հրէական ջարդի հեղինակներից մէկը, գրաֆ Պոդգորիչանի Պետրովիչ, նշանակուած է Եալթայի ժանդարմերիական վարչութեան կառավարիչ։ Եալթայի բնակչութիւնն ահ ու դողի մէջ։

— Կուրսկում տեղի ունեցաւ սահմանադրականների նահանգական համաժողով։ Ներկայ էր ոստիկանապետ Ֆրիմերման։ Նիստը բանալով, նախագահ իշխ. Դոլգորուկով հարցրեց ոստիկանապետին, թէ ինչ հիման վրայ նա պատուել է ժողովն իր ներկայութեամբ։ Ոստիկանապետը պատասխանեց, որ նահանգապետն է իրեն հրամայել։ Նախագահը պահանջեց ներկայացնել նահանգապետի գրաւոր հրամանը։ Ֆրիմերմանը խոստացաւ ներկայացնել այդ հրամանը և դուրս գնաց. բայց կէս ժամից վերադառնալով, ներողութիւն խնդրեց, թէ ինքը չգիտէր, որ նիստը դռնփակ է, ու նորից դուրս գնաց և այլ ևս չպատուեց ժողովն իր ներկայութեամբ։

— Ներկայումս ռուսական ոսկէ դրամը կորւում է Ֆրանսիայում։

— Պետերբուրգում ձերբակալուած և բանտարկուած են մի քանի լրագրավաճառներ, որոնք փողոցում վաճառում էին եղել արգելուած լրագրներ։

— Գաւառներում գտնուած գրավաճառներին առաջարկուած է չպահել և չվաճառել առանց գրաքննութեան տպագրուած գրքեր, եթէ դրանք պարունակում են 10-ից պակաս տպագրական թերթ։

— Ծխախոտի բոլոր գործարանատէրերը հրաւիրուած են Պետերբուրգ խորհրդակցելու համար ակցիզի տուրքըն աւելացնելու խնդրի մասին: Խորհրդակցութիւնը տեղի կունենայ մարտի 13-ին:

— Գրաֆ. Վիտտէն ծրագիր է կազմել պետական բանկի վերակազմութեան մասին: Այդ մասին նա խորհրդակցութիւն է ունեցել Բերլինի բանկիր Մենդելսոնի հետ:

— Արդարադատութեան մինիստրութեան մէջ վճռուած է փոխել քաղաքական յանցանքների համար սահմանուած պատիժներից մի քանիսը: Ի միջի այլոց, վերացւում է բերդարգելումը և դրա փոխարէն յանցաւորները կաքսորուեն հիւսիսային նահանգները:

— «Рус. Гос.»-ն հերքում է լրագրների մէջ լոյս տեսած այն լուրը, թէ Ծայրագոյն Արևելքում վերականգնւում է փոխարքայութիւնը:

— Պրինց Լիւդովիկ Նապոլէոնը, որը գտնւում է Պետերբուրգում, փետրուարի 27-ին գնացել էր Ցարսկոյէ Սելօ: Այն լուրը, թէ նա Կովկասի փոխարքայ է նշանակւում, վաղաժամ է:

— Ներքին գործերի մինիստրը մի շրջաբերականով պատուիրել է նահանգապետներին, որ խիստ հսկողութիւն ունենան հասարակական կլուբների վրայ:

— Ռուսական նաւատորմղի ուժեղացման խնդիրը կլուծուի Պետական Դումայի գումարումից յետոյ:

— Պետերբուրգում փետրուարի 27-ին գրաւուած է «Накануне» ամսագրի երկրորդ համարը՝ 4500 օրինակ: Խմբագիրը՝ պ. Աչաֆինով դատի է մատնւում:

— Այս օրերս Պետերբուրգում դադարեցրեց իւր գոյութիւնը երգիծաբանական «Красный смѣхъ» շաբաթաթերթը, որովհետև ոչ մի տպարան չէր վստահանում տպել այդ թերթը, վախենալով մամուլին վերաբերող վերջին օրէնքներից, որոնք սպառնում են փակել ամեն մի տպարան, ուր «վտանգաւոր» թերթ կը տպագրուի:

— Վերջին երեք ամսուայ ընթացքում զինուորական ծառայութիւնից արձակուած են մօտ 300 գեներալ և գնդապետ:

— Ներկայումս արդէն գործում է մինիստրների խորհրդի նախագահ գրաֆ Վիտտէի դիւանատան կից հիմնուած քաղաքական մի գաղտնի բաժանմունք, որի նպատակն է տեղեկութիւններ հաւաքել Պետական Դումայի համար ընտրուելիք թեկնածուների քաղաքական դաւանանքների մասին: Այդ գաղտնի բաժանմունքի համար յատկացուած է ամսական 3,000 ր.: («Рѣчь»):

— Ոստիկանութեան դեպարտամենտը ներկայումս քննել վերջացրել է Մոսկուայի ապստամբութեան համար մեղադրող 850 հոգու գործերը: 300-ից աւելի գործեր դադարեցրած են մեղադրական փաստեր չլինելու պատճառով: Ոմանք կդատուեն զինուած ապստամբութեան մասնակցելու համար, իսկ շատերը կաքսորուեն հիւսիսային նահանգները վարչական կարգով 2-ից մինչև 5 տարի ժամանակով:

— Պետերբուրգի կառապանները հիմնել են իրենց օրգանը «Голосъ звозчика» անունով:

## ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

**Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ.**—Լուրեր են պտտում թէ Մայր-Աթոռի «Արարատ» ամսագիրը հիմնովին կերպարանափոխութեան է ենթարկուելու, ներքին բնաւորութեամբ: Նմանապէս հրատարակուելու է ամիսն երկու անգամ որպէս «Հնգետասանօրեայ հանդէս»:

— Ասում են, թէ ճեմարանում այս տարի զատկից յետոյ դասերը չեն շարունակուելու. վարչութիւնը և ուսուցիչներն զբաղուելու են Նոր ծրագրի և կանոնադրութեան նախագծի կազմելով, որ պատրաստ լինի մայիսի 1-ին գումարուելիք ընդհանուր ուսումնարանական ժողովին ներկայացնելու:

— Ճեմարանի ուսուցիչներից հ. Կոմիտաս վարդապետ և պ. Գարեգին Լևոնեան, ինչպէս լսում ենք, պատրաստութիւններ են տեսնում առաջիկայ աշնանից մի գեղարուեստական-գրական հանդէս հրատարակելու:

— Վանական կառավարութեան անդամ Համազասպ վարդապետը նշանակուած է սինոդի գանձապահ:

— Վեհափառ Հայրապետը Թիֆլիսից էջմիածին է հրաւիրել գիւղատնտես Կոստանդին Մելիք-Շահնազարեանին վանքի այգեգործական և ագարակային գործերը կարգի ձգելու և այնուհետև էլ մնալու որպէս կառավարիչ:

— Որովհետև Վաղարշապատ գիւղը վերջին ժամանակներս դէպի Երևանի ճանապարհը շատ ընդարձակուել է և այնտեղի ապրողների համար դժուարութիւն է ծագել գնալ գիւղի հեռու եկեղեցին, Վեհափառ Հայրապետը հրամայել է ս. Շողակաթի վանքը դարձնել Վաղարշապատի համար երկրորդ ծխական եկեղեցի: Կը մնա՞յ, այնտեղ նրա վանահայր Մատթէոս վարդապետը թէ՞ վանք կը գայ, յայտնի չէ:

— Ճեմարանում աշակերտների համար բացւում է ընթերցարան լրագրներ և հանդէսներ կարդալու:

---

**ԳԵՏԱՇԵՆԻՑ.**—Փետրուարի 27-ին գործակալ Անանիա քահ. Շիրակունին եկաւ մեր գիւղը գիւղացիների վիճակի մասին հոգալու: Կիրակի օրը տէր-հայրը պատարագից յետոյ մի քարոզ խօսեց, հասկացնելով ժողովրդին ապագայում անելիք նրանց գործերը: Ժողովուրդը չպէտք է իւր վարիչներից ձեռք վերցնէ արդի պայմանները բացառիկ համարելով, տէր-հայրը խրախուսեց ժողովրդին և առաջարկեց առանց տատանման սկսել դպրոցային գործերը: Հայոց ծխական դպրոցի մասին խօսելով, տէր-հայրը խոստացաւ ուսումնարանին պատկանեալ գումարը բերել տալ, որոնցից հարկն է, ուսումնարանի նորակառոյց շինութիւնը վերջացնելու համար: Ժողովուրդը գոհ մնաց գործակալի այցելութիւնից: Գիւղերում շատ գործ կայ անելու. ժամանակը թանկ է. մարդ է հարկաւոր, որ ամեն գիւղում ժողովրդին հասկացնէ իրերի ներկայ դրութիւնը. այդ հարկաւոր է եւ առաւել քաղաքից հեռու գտնուող գիւղերին: Յուսով ենք, որ տէր-հայրը, միւս անգամ գալով, կզբաղուէ եկեղեցուն պատկանեալ հողերով, որոնք այս վերջին տարիներում մի քիչ հալուել են, միանալով ուրիշ սեփհականութիւն սիրող անձերի հողերի հետ:

---

**ՔԱՐԻՆՏԱԿ գիւղից.**—Մեր գիւղն ընկած է Շուշի քաղաքի հարաւային կողմը՝ Շուշու և Քիրս սարի մէջտեղը: Հայոց եկեղեցական ծխական դպրոցները փակուելուց յետոյ, գիւղացիներից շատ քչերն իրենց զաւակների կրթութեան համար մտածելով ուղարկում էին Շուշի ուսումն առնելու զանազան դպրոցներում: Առաւօտը գնում էին երեկոյեան վերադառնում և շատ անգամ էլ գիւղական գործերով զբաղուելով չէին յաճախում դպրոցները, թէպէտև գիւղից քաղաք գնալը շատ յարմարութիւններ ունի: Թեմիս սրբազան առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը մեր գիւղում դպրոց բաց անելով մի պաշտօնական թղթով նշանակել է (նախկին ուսուցիչ այժմ քահանայ) Սամուէլ քահանայ Գասպարեանցին մեր գիւղի դպրոցի փորձուած ուսուցիչ և քարոզիչ: Մեր գիւղին մեծ բարիք արաւ Թեմիս սրբ. առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը, որ Սամուէլ քահանայ Գասպարեանցին նշանակեց մեր դպրոցի ուսուցիչ: Սպասենք, որ տէր Սամուէլ քահանան մեր յոյսերն ի դերև չհանէ ապագայում:

---

**ԲԱԳՈՒԻՑ.**—Թիֆլիսից այստեղ եկած թաթար պատգամաւորներից մէկը, ինչպէս ասում են, խորհրդակցելու է հաշտութեան խնդրի վերաբերութեամբ: Այստեղի մահմեդական ժողովուրդը, եթէ հաւատանք, ինչպէս ասում են, զզուած է երկու դըրացի ազգերի սուր յարաբերութիւններից, կամենում է խաղաղ դրութիւն, ինչպէս եղել է Նիկոլայ-տաւրի առաջ:

## ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Մարտի 2-ին սովորական ժամին նիստը բացուելուց յետոյ, ժողովը շարունակեց զբաղուել վնասների հատուցման խնդրով:

**Կ. Խատիսեան.**—Հայ յեղափոխական կազմակերպութիւնների ու այլ առիթներով Թուրք պատգամաւորների հայերիս դէմ արած յարձակումները մենք դիտմամբ շատ անգամ անպատասխան ենք թողել: Դրա պատճառն այն է, որ մենք եկել ենք այստեղ խաղաղութիւն հաստատելու հաստատ դիտաւորութեամբ: Սակայն խաղաղութիւն ու հաշտութիւն կը հաստատուի միայն այն ժամանակ, երբ յափշտակողից կըխլուեն ու կը վերադարձուեն զրկուածին: Պէտք է խոստովանել, որ որևիցէ պետութեան մէջ իրաւական կարգը խանգարուելուց յետոյ, դժուար է այլ ևս այնտեղ արդարադատութիւն փնտռել: Իսկ երբ զեղծւում են արդարադատութեան օրէնքները, խոլոյն նրան փոխարինում է ինքնադատութիւնը: Խաղաղութեան ու հաշտութեան մասին մեր բոլոր խօսածներն ու պայմանաւորութիւնները ոչ մի նշանակութիւն չեն ունենայ, քանի ժողովրդական մասսաների մէջ կենդանի է զրկանքի զգացումը: Իսկ զրկանքի զգացումը նրանց մէջ հանգչնելու միակ պայմանն այն է, որ զրկուածին վերադարձուի նրա ունեցած կորուստները: Քանի մէկ կամ միւս ժողովուրդը իւր աչքով տեսնում է իւր ստացուածքը իւր դրացու ձեռքում, միշտ էլ նա իւր սրտի խորքում խաղաղութեան ոչ մի պայմանագիր կամ խոստում չպէտք է ընդունի, և հէնց առաջին պատեհ առիթին թշնամութիւնը նորից կըբորբոքուի, գուցէ առաւել մեծ չափերով: Ուստի մենք պատգամաւորներս այնպէս պէտք է անենք, որ իւրաքանչիւր ոք իւր ստացուածքի տէրը դառնայ:

**Ս. Ս. Պետրոսեան.**—Հարցն այստեղ վնասներն ընդհանրապէս փոխարինելու մասին է և ոչ յափշտակուած իրերի իրենց տէրերին վերադարձնելու մասին, ինչպէս որ քիչ առաջ յայտնեց պ. Խատիսեանը:

**Ցաուբխնեան.**—Այո, խնդիրը կորուստների փոխարինման մասին է, ինչ ճանապարհով ուզում է լինի այդ:

**Հ. Առաքելեան.**—Հայ պատգամաւորների ծրագրի 7-րդ այդ կէտը խիստ կարևոր է: Ահա թէ ինչու: Հին-Նախիջևան քաղաքն ու նրա գաւառի 48 գիւղերը 1905 թ. մայիսի 12-ին մատնուեցին հրդեհի ու թալանի, որոնց ժամանակ 214 մարդ է սպանուել ու 2½ միլիոն ր. վնաս հասել հայ բնակչութեանը: Դրանից 1,385,000 ր. պատկանում է քաղաքին: Բնակչութիւնը ծայրայեղ աղքատութեան է մատնուած, և վնասների հատուցումը միայն կարող է ժողովրդի մէջ համոզում գոյացնել, թէ այդպիսի թալաններ ապագայում չեն կրկնուիլ այլևս: Կորուստների գանձումը վարչութեան յանձնուելու դէմ առարկութիւններ են լինում նկատելով այդ յետադիմական մի քայլ: Սակայն ուշադրութիւնից չպէտք է վրիպեցնել այն հանգամանքը, որ այդ գործում վարչութեանը պէտք է միանան երկու կողմերից ընտրուած յանձնախմբերը: Թուրք պատգամաւորները յայտնեցին և այն կարծիքը, թէ վնասների հատուցումը դիպչում է թուրք ունևոր դասի շահերին: Դժուար թէ այդպիսի մի առարկութիւն կարելի լինի արդարացնել: Ասացէք, խնդրեմ, թուրք բէկերն ու աղալարներն ինչ մեծ ծառայութիւններ մատուցել մուսուլման ժողովրդին: Փաստն այն է, որ նրանք ոչ մի կարևոր ծառայութիւն չեն արել ոչ թուրք ժողովրդին, և ոչ էլ նրա ինտելիգենտիային: Հայը կատարելապէս այն համոզման է, թէ կոտորածների ու թալանների պատճառը թուրք աղալարներ ու բէկերն են եղել, մուսուլման հասարակ ժողովուրդը իրենց ձեռքում որպէս գործիք ծառայացնելուց:

**Խասմամեդով.**—Թուրքերս դէմ չենք վնասների հատուցման առաջարկին: Մեր ու հայ պատգամաւորների միջև այդ խնդրում եղած տարբերութիւնը կայանում է միջոցների ընտրութեան մէջ: Յափշտակութիւնների ժամանակ տեղի ունեցած շատ դէպքերում յանցաւորներն արդէն բռնուած լինելով, նրանց դէմ յարուցուած է քրէական դատ, հետևաբար պ. Ցարութիւնեանը իւր առաջարկութեամբ՝ աչքի առաջ ունենալ քաղաքացիական դատեր, դժուար է քրէական ճանապարհով արդէն սկսուած գործերը դադարեցնել և նրանց կարգադրութիւնը յանձնել վարչութեան:

**Աղաեւ.**—Վիճաբանութիւններից վերջ տալու համար, ես առաջարկում եմ վերադառնալ ծրագրների առաջին կէտին—կոտորածների պատճառները երևան բերել: Երբ յայտնի կլինեն յանցաւորները, նրանցից էլ կարելի է վնասները պահանջել:

**Կարաբեգով.**—Հայ պատգամաւորները շարունակ պնդում են, թէ հայերը մեծամեծ կորուստներ են ունեցել և դրանից շահուել է թուրք ժողովուրդը: Մեր պատգամաւորները մի քանի անգամ կրկնեցին, թէ այդ այդպէս չէ: Ասւում է նմանապէս, թէ մինչև որ կողոպտուած ստացուածքը չյանձնուի տէրերին, հաշտութիւն չի կարող կայանալ: Բայց միթէ այդ արդէն չի կատարուել ու չի կատարուիլ այսուհետև: Իսկ եթէ պահանջւում է, որ բոլոր վնասներն անպատճառ տուժուեն, այդ պարագայում հարկաւոր է նախ յանցաւորներին գտնել:

**Գեն. Մալամա.**—Վնասների հատուցման հարցի վերաբերմամբ կողմերի պատգամաւորները որոշ կերպով տարբերւում են միմեանցից, և դժուար է յուսալ, որ նրանք համաձայնութեան կը գան, ուստի այդ հարցի կարգադրութիւնն ամբողջովին կը թողնուի փոխարքայի վերահայեցողութեանը:

**Ա. Խատիսեան.**—Ամեն օր պատգամաւորներիս զանազան տեղերի հայ հասարակութիւններից հասած հեռագրներն ու նամակները թոյլ չեն տալիս վնասների հարցը բաց թողնել: Ես վճռականապէս յայտարարում եմ, որ եթէ վնասները չհատուցուեն, մենք, հայ պատգամաւորներս, անկարող ենք մեր միսիան կատարել: Մեր ծրագրի այս կէտի հետ չհամաձայնել նշանակում է երկու ժողովուրդներին թշնամութեան առատ նիւթ մատակարարել, որն ամենայն դիւրութեամբ կարող է ամեն մի վայրկեան վերստին բորբոքուել:

**Աղաեւ.**—Այդ դէպքում հարկաւոր է վերադառնալ առաջին կէտի պատճառների քննութեանը: Դուք հայերդ ունէք յեղափոխական կազմակերպութիւններ, որոնք յարձակւում են մեր ժողովրդի վրայ, և նա պարտաւորուած է ինքնապաշտպան լինել: Մեզ ամենքն էլ ճանաչում են, հետևաբար մեղանից դիւրին է վնասներ պահանջել, իսկ ինչպէ՞ս պահանջեն ձեր մարդկանցից, որոնք բոլորովին անյայտ են:

**Թաղիևնոսեան.**—Հաշտժողովի բացման օրուանից սկսած մինչև այժմ նախագահն աչքի ընկնելիք մարդասիրութեամբ ու համբերութեամբ է վերաբերուել դէպի ժողովի զբաղմունքը, ուստի ցանկալի էր, որ նոյն այդ ընթացքը նա ունենար նաև այս խնդրի նկատմամբ, կողմերին հնարաւորութիւն տալով առաւել մանրամասն բացատրուելու:

**Թոփչիբաշեւ.**—Վնասների հատուցման գործում մատնացոյց են լինում տեղական ներկայացուցչական յանձնախմբերի կատարելիք դերի վրայ: Սակայն, իմ կարծիքով, հէնց այդ յանձնախմբերը տարաձայնութիւնների ու խռովութիւնների բոյն պէտք է դառնան: Այդ բանի փորձը մեր աչքի առաջն է: Ի՞նչ արդիւնք տուին վնասներ որոշող յանձնախմբերը ներքին Ռուսիայում ագրարական շարժումների ժամանակ տեղի ունեցած կորուստները որոշելիս: Արդիւնքը եղաւ այն, որ տեղի ունեցան նորանոր յափշտակութիւններ: Միևնոյնը կը պատահի և մեզանում: Ո՞վ պէտք է լինի վնասների չափը որոշողը, և ինչ հիմունքներով պիտի որոշուեն դրանք: Այստեղ համայնական յափշտակութիւնների մասին է խօսքը, ուր յանցաւորը որոշել խիստ դժուար է:

**Տէր-Ալեքսեան.**—Զարմանալի է: Երկրորդական կարևորութիւն ունեցող հարցերում թուրք պատգամաւորները կատարելապէս համերաշխ էին հայերին: Սակայն երբ խօսքն այդպիսի մի կենսական խնդրի մասին է, նրանք, ընդհակառակը, խիստ ընդդիմութիւն են ցոյց տալիս: Երբ խնդիրը վերաբերում է վնասների հատուցման, նրանք մեզ ուղարկում են այն դատարանները, որոնց մասին հէնց նախորդ նիստում թուրք պատգամաւորներից մէկն այնքան պարսաւանքով էր խօսում: Թուրք պատգամաւորները, վնասների հատուցման խնդրում իրենց հայեցակէտերը փաստարանած լինելու նպատակով, հայ-թիւրքական կոտորածներն անուանում են տարերային երևոյթ: Բայց միթէ կատարուած յափշտակութիւնները կարող են տարերային լինել այնտեղ, ուր յարձակողները գալիս էին հեռաւոր տեղերից սայլերով, փուրգոններով, ուղտերով, ուրեմն առաջուց տեսնուած ամեն տեսակ պատրաստութեամբ: Այդ վարմունքն ինձ յիշեցնում է մի շատ ծիծաղելի անեկդոտ: Մարդուն մէկը բանջարանոցի ցանկապատից ներս է անցնում, ձեռքին բռնած մի պարկ, և սկսում է այն լցնել վարունկով: Գողին բռնում են և հարցնում, թէ ինչպէս ընկաւ նա այդտեղ: «Քամին ձգեց»,—պատասխանում է նա: Հապա վարունկներն ինչո՞ւ ես քաղում: «Որպէսզի նրանցից կպչիմ ու քամին ինձ չտանի»: Հապա պարկը: «Այդ արդէն չգիտեմ»,—պատասխանում է գողը: Ճիշտ այդպէս էլ վնասների հատուցման խնդրում:

**Զիաթխանով.**—Կոտորածներն առաջ են բերել մեծամեծ վնասներ: Այդ ոչ ոք չի հերքում: Ես ինքս վնասուողներից մէկն եմ: Սակայն ի սէր խաղաղութեան, վնասների հատուցման հարցը մի անգամ առ միշտ պէտք է փակել: Դատարանները որքան էլ դանդաղ լինեն իրենց գործունէութեան մէջ, այնուամենայնիւ կը տան որոշ հետևանքներ, մինչդեռ գանձումը կառավարութեան՝ յանձնուած դէպքում, դրութիւնն աւելի ևս կը բարդուի, և առաջ կը գան նորանոր յուզումներ: Այստեղ բաւական կծու յարձակումներ եղան թուրք աղալարների ու բէկերի հասցէին: Սակայն անարդար են այդ յարձակումները: Թուրք աղալարները շատ քիչ են տարբերւում թուրք գիւղացիներից: Զանազանութիւնը միմիայն նրանումն է, որ առաջինները փոքր ինչ աւելի հարուստ ու ապահով են: Յարձակումներին նրանք նոյնքան ենթակայ էին, որքան և գիւղական համայնքները: Նրանք պարտաւորուած էին ժողովրդի շարքերը մտնել ու զէնքը ձեռքին պաշտպանուել եղած յարձակումների դէմ: Եթէ այդպէս չվարուէին, իրենց դէմ կը գրգռէին հէնց մուսուլմանների զայրոյթը: Իսկ ինչ վերաբերում է այն մեղադրանքին, թէ նրանք ոչինչ չեն արել իրենց ժողովրդի կրթութեան համար, այդտեղ պէտք է ի նկատի ունենալ, որ նրանք իրենք կարօտ են ուսման ու լուսաւորութեան: Մեր այստեղ ժողովուելու նպատակն է նըպաստել խաղաղութեան հաստատման գործին, իսկ հայ պատգամաւորների պահանջներն ու խօսածները հեռու են մեր առաջ դրուած այդ նպատակից:

**Կ. Խատիսեան.**—Թուրք պատգամաւորներից ոմանք անդադար պնդում էին, թէ հայերից չի կարելի վնասներ պահանջել, որովհետև հայ կազմակերպութիւնները չի կարելի ձեռք անցկացնել: Սակայն այդպէս պնդողներն ամենևին չկարողացան հաստատել, որ հայ կազմակերպութիւնները յափշտակութիւններով էին պարապում: Թուրք պատգամաւորների ասելով, թալանողներն եղել են երկու կողմի խուլիգանները, որոնք, ոչ մի կուսակցութեան չպատկանելով, ամենևին էլ դժուար ձեռք անցնելիք չեն:

**Աղաեւ.**—Այստեղ առակներ են պատմում, բռնուած գողի մասին խօսքեր են լինում: Բայց խնդիրը բռնուած գողին չի վերաբերում, այլ մի ժողովրդի, որ պարտաւորուած էր պաշտպանուել կազմակերպուած զօրքի դէմ: Որ թուրք ժողովուրդը շարունակ ենթակայ է եղել հայ կազմակերպութիւնների յարձակմունքներին, — դա հաստատուած է պաշտօնական հաստատութիւնների արձանագրութիւններով ու հաղորդագրութիւններով: Մեր յիշողութիւնների մէջ միանգամայն թարմ է, թէ ինչպէս անցեալ օգոստոսի դէպքերի ժամանակ հայերն անխնայ կոտորում էին թուրք մշակներին ու բեռնակիրներին: Իսկ հիմա նոյն այդ հայերը կորուստների հատուցում են պահանջում, և այն էլ վարչութեան ձեռքով: Ես դարձեալ պարտաւորուած եմ կրկնելու. քանի դեռ հայ յեղափոխ. կազմակերպութիւնները գոյութիւն ունեն և երկրում կը շարունակուի տեռորը, երբեք չի կարող խաղաղութիւն հաստատուել: Ես ի դիմաց թուրք հասարակութեան դիմում եմ իշխանութեան ներկայացուցիչներին և ասում. պաշտպանեցէք մեզ հայ յեղափոխ. կազմակերպութիւնների դէմ, կամ ոչնչացրէք այդ ընկերութիւնները, և կամ մեզ զէնք տուէք պաշտպանուելու:

**Թաղիևնոսեան.**—Պ. Աղաեւ, շեղուելով խնդրից և կրկին վերադառնալով կազմակերպութիւնների հարցին, ի միջի այլոց, տուեց նաև սխալ տեղեկութիւններ: Օգոստոսեան Բագուի կոտորածներն առաջացել է ընդհանուր գործադուլից, ուր հայերը ոչ մի յանցանք չունէին: Ատրճանակի առաջին պայթիւններին զօրքը փողոցները բռնել էր, և գնդակահար եղած թուրք մշակներն ընկած են զօրքի գնդակներից, և ոչ հայ յեղափոխականների: Սխալ է նմանապէս պ. Աղաևի՝ նաւթահանքերի հրդեհների նկատմամբ ունեցած այն հայեացքը, թէ դրանցից միայն հայ դրամատէրերն են վնասուել: Չէ՞ որ նաւթահանքերով էին ապրում հայ ու թուրք հազարաւոր բանուորներ, որոնք, հանքերի հրդեհի ճարակ դառնալուց յետոյ, մնացել էին օրուայ հացի կարօտ: Եւ վերջապէս չպէտք

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՆԳԼԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ *)

### 5. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անգլիայի պետական կեանքի ղեկավարը հասարակական կարծիքն է, այդ պատճառով էլ մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, թէ ինչ ուղղութիւն նա կունենայ: Քաղաքական կուսակցութիւններ են կազմակերպւում, որ երկրի կառավարութեան գործն իրենց ձեռքն առնեն կամ նրա վրայ որոշ ազդեցութիւն ունենան: Ժողովրդի մէջ երկու հիմնական կուսակցութիւն կայ. նախ յառաջադիմական, որ դէպի առաջ է նայում և ձգտում բարելաւել գոյութիւն ունեցող պայմանները. իսկ ապա պահպանողական, որ աւանդութիւնների կողմնակից է և աշխատում է արդէն ձեռք բերուած բարիքները պահպանել: Անգլիական հրապարակախօսներից մէկն ասում է, թէ ամեն մի անգլիացի կամ փոքրիկ ազատամիտ է ծնւում, կամ փոքրիկ պահպանողական: Ամեն մի հինգ անգլիացուց երկուսն անպատճառ պահպանողական են լինում, երկուսն՝ ազատամիտ և վերջապէս հինգերորդը յայտնի չէ, թէ ինչ է, և նրա վճռից է կախուած, թէ որ կուսակցութեան կառավարութիւն կըլինի Անգլիայում: Անցեալ դարի երրորդ քառորդում այդ հինգերորդ մարդիկը միանում էին ըստ մեծի մասի ազատամիտներին, իսկ վերջին քառորդում սկսեցին աւելի և աւելի յարել պահպանողականներին: Գլադստոնը երեք անգամ կարողացաւ իւր կողմը գրաւել, բայց որովհետև անգլիական սահմանադրութեան առանձնայատկութիւնների պատճառով պարլամենտի անդամ լինել կարող են միայն հարուստ մարդիկ, իսկ հարուստներն առհասարակ չեն սիրում արմատական բարենորոգումներ, ուստի վերջին 10—15 տարուայ ընթացքում ազատամիտների բանակից սկսեցին անցնել պահպանողականների բանակը, որով և ուժեղացրին պահպանողական կուսակցութիւնը:

Անգլիայի պարլամենտում կուսակցութիւնները հաւասար իրաւունք ունեն: Նոյն իսկ փոքրամասնութեան վրայ կառավարութիւնը նայում է որպէս մի ուժի վրայ, որ վաղը մեծամասնութիւն կարող է դառնալ: Ընդդիմադրական կուսակցութիւնն այնտեղ «անբարեմիտ» և հասարակական տարրերի «հիմք քանդող» մարդկանցից չէ բաղկացած, այլ, ընդհակառակը, կառավարութեան կանոնաւոր գործունէութեան համար նա անհրաժեշտ պայման է: Իւր նշանակութեամբ նա հաւասար է գործող կառավարութեան, և օրէնքներում ասած է ոչ թէ ընդդիմադրութիւն ընդդէմ թագաւորի, այլ թագաւորի ընդդիմադրութիւնը:

Հիմնական երկու կուսակցութեան գործը փոքր ինչ բարդում են ծայրայեղ տարրերը՝ մի կողմից արմատականներն ու բանուորների ներկայացուցիչները, որոնք ձգտում են խիստ փոփոխել քաղաքական և հասարակական կեանքը, իսկ միւս կողմից՝ անգլիկանները, որոնք երազում են վերականգնել եկեղեցու միստիկական դերը: Սակայն այդ խմբերն այնքան էլ մեծ չեն և նշանաւոր դեր չեն խաղում: Ուրիշ բան են իրլանդական խմբերն, որոնք նոյնչափ են հետաքրքրւում Անգլիայի քաղաքական գործերով, որչափ որ այդ գործերը նրանց ազգային ձգտումներին են վերաբերւում: Եւ որովհետև բուն անգլիական կուսակցութիւնները քիչ թէ շատ հաւասար են, այդ պատճառով իրլանդացիները նշանաւոր ազդեցութիւն են ունենում հարցերը վճռելիս՝ այս կամ այն կուսակցութեան յարելով, նայած թէ նրանց համար որն է շահաւէտ: Նոյն իսկ Իրլանդիայի ինքնավարութեան հարցը, ինչպէս յայտնի է, պառակտութիւն ձգեց անգլիական կուսակցութիւնների մէջ, բայց Իրլանդիայի և իրլանդական կուսակցութեան մասին մի քիչ յետոյ կըխօսենք:

Այսպէս թէ այնպէս մինչև օրս էլ դեր խաղացող կուսակցութիւնների երկուսն են՝ ազատամիտ և պահպանողական: Անշուշտ երկու կազմակերպուած կուսակցութիւնները բաժանուած պիտի լինեն սկզբունքով տեսողական կարևորութիւն ունեցող հարցերի նկատմամբ, և երբ այդ տարբերութիւնը չի լինում, այն ժամանակ նրանք միմեանցից էլ չեն զանազանւում: Ներկայումս այդ երկու կուսակցութեան մէջ սկզբունքի որևէ տարբերութիւն չկայ, եթէ դատելու լինենք նրանց մասին ոչ թէ արտասանած ճառերով, այլ նրանց գործունէութեամբ, և դրանով պէտք է բացատրել այն երևոյթը, որ ազատամիտների բանակից փախչողների և պահպանողականների կողմն անցնողների թիւը բազմանում է:

Մինչև անցեալ դարի սկիզբը երկու ազնուապետական կուսակցութիւնից իւրաքանչիւրն իրեն էր ուզում վերապահել իշխելու իրաւունքը, այն է՝ տորիներն ու վիգերը, որոնցից առաջինները պալատական ազնուականներ էին, իսկ երկրորդները—կալուածատէրեր: Վիգերին են յարում քաղաքների հարուստ դասակարգերը, իսկ երկրագործ դասակարգի յայտնի ու նշանաւոր մարդիկ՝ տորիների կուսակցութեան, որոնք իրենց նախկին արտօնութիւններն էին պաշտպանում: Այդ երկու կուսակցութիւններն իրենց դասակարգային շահերն էին պաշտպանում և էութեամբ միմեանցից չէին զանազանւում, այլ միայն ինքնավարութեան և հաւատի համբերատարութեան սկզբունքի գործադրութեան աստիճանով. տորիներն իրենց աւանդութիւնով կապուած էին միապետութեան և եպիսկոպոսական եկեղեցու հետ, մինչդեռ վիգերն աւելի յառաջադիմական հայեացքներով էին ղեկավարւում: Սակայն երկու կուսակցութիւն կազմողներն էլ միևնոյն հասարակութեան մարդիկ էին և կարողանում էին միմեանց դէմ կռիւ մղել մեծ անձնազոհութեամբ և հիշնական համեբաշխութեան պէ[illegible]ուցումով: Անցեալ դարից բուրժուազիան սկսում է զօրեղանալ և ձուլուել վիգերի հետ: 1832 թ. բուրժուազիան քաղաքական տիրապետութիւն է ստանում, և վիգերի կուսակցութիւնը դառնում է ազատամիտ կուսակցութիւն, իսկ տորիները— պահպանողական: 1832 թ. մինչև 1848 թ., այսպէս ասած չարտիստական շարժման ժամանակ, արդարև, կուսակցական կառավարութիւն էր Անգլիայում, որովհետև երկու կուսակցութեան մէջ խոր սկզբունքի տարաձայնութիւն էր: Հացի օրէնքների ծանրութեան տակ ժողովուրդը հեծում էր, և երիտասարդ բուրժուազիան, որ ազատ առևտուրի կարօտ էր իւր ձեռնարկութիւնները զարգացնելու համար, աժան հացի համար մղած կռւում ժողովրդի կամքի ներկայացուցիչն էր: Այդ ժամանակ կռիւ էին մղում մի կողմից գործարանատէրերը ժողովրդի դէմ, իսկ միւս կողմից՝ հողատէրերի, և, ինչպէս յայտնի է, յօգուտ ժողովրդի վերջացաւ: «Երբ Պիլը,—պատմում է Ֆրեդերիկ Գէյլը,—ցորենի մաքսը փոխել տալու օրէնքն անցկացնելուց յետոյ պալատից փողոց դուրս եկաւ, նա տեսաւ, որ փողոցը լցուած է ժողովրդով, իսկ երբ ժողովուրդը տեսաւ Պիլին, գլխարկը է մտածել, որ հայերն ու Թուրքերը ներկայացնում են երկու զինուած բանակներ. ամենաաննշան մի պատճառ կարող է ընդհանուր կոտորած առաջացնել, ուստի թէ մէկ և թէ միւս կողմերի համար խոր համոզմունք պէտք է դարձնել, որ այսուհետև անհնարին է թալաններ անել ու անպատիժ մնալ:

---

*) Տես «Նոր-Դար» № 42.

**Բժ. Կարաբէգով.**—Հայերի համար թանկ է իրենց նիւթական կորուստները. հապա ինչպէս պէտք է վարուել բազմաթիւ սպանուած պարսկահպատակ մշակների տէրերի հետ. ո՞վ պէտք է նրանց վնասներն որոշի ու տուժի: Պէտք է պատժել ու տուգանքի ենթարկել այն կողմը, որը մաուզերեան հրացաններով կռուի է դուրս եկել: Հարկաւոր չէ, սակայն, այդ բաների մասին խօսել: Մեզ ամենից առաջ հարկաւորն այժմ խաղաղութիւնն է, և ես չգիտեմ ոչ մի Թուրք, որ խաղաղութեան բաղձացող չլինի: Երկրի մէջ կայ օրէնք, թող նա անաչառօրէն երևան բերի յանցաւորներին և պատժի:

**Ա. Խատիսեան.** — Ցաւում եմ, որ Թուրքպատգամաւորներից ոմանք մաուզերեան հրացանների մասին իմ ասած մի քանի խօսքերս աշխատում են շահագործել: Թուրքերը նախայարձակ լինելու մեղքը վերագրում են հայերին: Բայց միթէ դա արդարութիւն է: Միթէ Հին-Նախիջևանում, ուր 45 հայ և միայն մի հատ Թուրք կայ սպանուած, նախայարձակ եղողները հայերն են եղել: Զարմանալի է նմանապէս և Թուրքերի այն չքմեղանքը, թէ իբր իրենք պաշտպանութեան են կարօտում: Սրանից մի քանի նիստ առաջ Հաջիևը չէ՞ր, որ պարծանքով էր յիշում, թէ Թուրքերը շատ լաւ զինուած ու լաւ էլ կռուողներ են: Եւ միթէ այդ մինչոյը չի կարող հաստատել կառավարութիւնն ինքը: Ես իմ կողմից դարձեալ վճռողաբար պնդում եմ, թէ երկու կողմի վնասներն էլ պէտք է հատուցուեն, որովհետև չտուժելը, բացի նրանից, որ նիւթականապէս կորստաբեր է, միևնոյն ժամանակ ժողովրդի աչքում դա կդառնայ քար գայթակղութեան: Կառավարութիւնը պարտաւոր է թալաններն ու կողոպուտները հիմնովին վերացնել: Թուրք պատգամաւորները երկար կանգ առան նաև իրենց առանձնաշնորհուած դասակարգերի վրայ: Սակայն Թուրք ժողովրդի հիմքն ու պարծանքը կազմողը նրանք չեն, և շատ չի քաշիլ, որ այդ բէկերն ու աղալարներն ստիպուած կլինեն հրապարակից բոլորովին քաշուելու, ինչպէս այդ պատահել է ֆէօդալական կազմ ունեցող ուրիշ շատ երկրներում: Պէտք է հասկանալ, որ մենք բէկերից ու աղալարներից առանձին պահանջ չունենք, թէև համոզուած ենք, որ չարիքի բուն արմատը նրանք են:

Նախագահն, երկու կողմից յայտնըւած կարծիքներն ամփոփելով, եզրակացնում է, որ երկու կողմերն ևս սկզբունքով ընդունում են վնասների հատուցման առաջարկը. հայ պատգամաւորներն պահանջում են այդ անել վարչական ճանապարհով իսկ Թուրքերը—դատական միջոցներով:

**Գեն. Մալաման** խորհրդածութեան է դնում վնասուած գիւղական համայնքների տեղափոխութեան հարցը:

**Ս. Քալանթար** Ղազախի և ուրիշ գաւառներից բերած օրինակներով ցոյց է տալիս, որ աղէտի ենթակայ եղած շատ տեղերի գիւղական համայնքները, իրենց բնակուած նախկին վայրերում խիստ սահմանափակ թիւ ներկայացնելով, դժուար է նրանց ստիպել կրկին իրենց աւերուած գիւղերը վերադառնալ: Նպատակայարմար է համարում այդպիսի տեղերում յանձնախմբեր կազմել և նրանց յանձնել Թուրք գիւղացիների հետ հողերի փոխանակութեան խնդրի կարգադրութիւնը:

Այդ մասին կողմերի փոխանակած կարծիքներից երևում է, որ հողերի փոխանակութիւնը ցանկալի է թէ մէկ և թէ միւս կողմին, ուստի նախագահը, որպէս եզրակացութիւն առաջարկուած հարցի, հողերի փոխանակութիւնը համարում է կամաւոր: Ապա նա անցնում է Գանձակ քաղաքը երկու մասի բաժանելու խնդրին:

**Խոջայեան.** (Գանձակի հայ պատգամաւոր) առաջ է բերում հայոց կողմից արուած այդ առաջարկի շարժառիթները և այդ բոլը համարում է միակ արմատական միջոցն ապագայ ընդհարումների առաջն առնելու տեսակէտից: Խնդրին լուծում տալու նպատակով ցոյց տրուած միջոցներից ընդունւում է այն, որ խնդրի կարգադրութիւնը յանձնուի միջնորդ դատարանին և կամ տեղական խառն յանձնախմբին: Համաձայնութեան ճանապարհներն անվտանգ պարզելու կէտն ընդունւում է առանց վիճաբանութեան, և նախագահը, յաջորդ տասներորդ նիստը նշանակելով մարտի 4-ին, շաբաթ օրը, ժողովը փակում է:

**ՇՈՒՇՈՒՑ,** Մարտի 8-ին, Թեմի ա. առաջնորդ զեր. Աշոտ եպիսկոպոսը հեռագրում է մեզ. «Ժամանակի հոգին, բնականաբար, շարժումն առաջ բերեց և մեր հոգևոր դպրանոցի աշակերտների մէջ, բայց մենք չը հետևեցինք միւս դպրոցական հաստատութիւնների օրինակին: Աշակերտների անմեղ և անվնաս պահանջներին գոհացում տրուեց և կանոնաւորապէս շարունակւում է դասընթացը: Մասնաւոր աղբիւրներից յեղաշրջած լուրերին չպէտք է նշանակութիւն տալ և հաւատալ»:

## ՓՈԽԱՐՔԱՅԻ ԽՕՍՔԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ

Մենք անկարող եղանք հայ-Թաթարական համաժողովի զրոյցների հաշիւներն օրը օրին տալու «Նոր-Դար»-ի ընթերցողներին, որովհետև մեր կողմից նիստերին ներկայ լինելու համար յատուկ ներկայացուցիչ չուղարկեցինք: Համաժողովն այժմ արդէն վերջացրել է իւր աշխատանքները և վերջին նիստը տեղի է ունեցել մարտի 6-ին: Այդ ժողովը, որպէս վերջինը, դարձեալ բացել է ինքը գրաֆ Վարանցով-Դաշկովը երկու կողմերի պատգամաւորներին իւր ուղղած հակիրճ ճառով:

«Ձեր նիստերում,—ասել է գրաֆը,—դուք շօշափել էք նաև այնպիսի հարցեր, որոնց մեծամասնութիւնն անկարող են հանդիսանում բոպէի առաջադրած անյետաձգելի հարցերը կտրուկ կերպով վճռելու:

«Երբ տունը բոցերի մէջ է գտնւում, անտեղի է մտածել այն մասին, թէ ապագայ տունն ինչ նիւթից և ինչ յատակագծով պէտք է շինել: Այդ բոպէին ամենակարևորն է որոշել հրդեհի խառնարանը, և նրա վրայ էլ պէտք է կեդրոնացնել հանգցնելու բոլոր միջոցները: Ահա այդ խառնարանն է, որ դուք չորոշեցիք ձեր ժողովների ընթացքում»:

Գրաֆ փոխարքայի ճառը, թէև հակիրճ, բայց տպաւորութիւն է առաջ բերում որոշելով կառավարութեան անելիքը: Նա շեշտում է Թագաւոր Կայսրի անդառնալի կամքը հայ-Թաթարական կռուին վերջ տալու մասին և իւր կողմից աւելացնում, թէ նա անպատճառ պէտք է վերջ դնի, ուստի երկու կողմի պատգամաւորներին ևս հրաւիրում է իրենց ամբողջ ազդեցութիւնն ի գործ դնել առաջադրուած նպատակին հասնելու համար, որը ձեռք բերելուց յետոյ միայն նա այլ ևս կարիք չի տեսնում երկրի բնակչութիւնը զինուած վիճակի մէջ թողնելու: Իսկ նախ քան այդ, երկրի մի որոշ չափով խաղաղուելը, նա օգտակար չի համարում ամբողջ բնակչութիւնը զինաթափ անելը, որովհետև ժողովրդի մի մասի համար նրա ունեցած զէնքը նկատում է ինքնապաշտպանութեան միակ միջոց:

«Ես կարող էի ձեր խորհրդածութիւններից սպասել առաւել իրագործելի միջոցների մշակում,—վերջացնելով ասում է գրաֆը,—սակայն արդէն կատարուածներից ևս ես այն համոզմանն եմ դալիս, որ դուք ամենքդ համակուած էք խաղաղութեան ու հաշտութեան իղձերով:

«Ներշնչեցէք, ուրեմն ձեր այդ ձգտումները ձեր հաւատակիցներին, և խաղաղութիւնն ինքն ըստ ինքեան կվերականգնուի»:

Փոխարքայի ճառի բառացի բովանդակութիւնն առաջ կբերենք համաժողովի հաշուետուութեան մէջ, իւր տեղում:

## ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

«Нов. Обозр.»-ն հաստատ հաւատքի ու փոխադարձ վստահութեան մէջ է ուզում տեսած լինել հայ-Թրքական Թշնամութեան վերջանալու գլխաւոր երաշխաւորութիւնը:

Կանցնի որոշ ժամանակ, պարոնայք պատգամաւորները կը վերադառնան իրենց տեղերը, կոչնչացնեն այնտեղ չարութեան ու ատելութեան մախանքը, չորս կողմը տարածելով փոխադարձ վստահութեան կենդանացուցիչ ու բարի սերմերը սիրոյ ու բարեացակամութեան, և... արիւնեղութիւնը վերջ կը գտնի, սակայն այն անհրաժեշտ պայմանով, որ բացի այդ փոխադարձ վստահութիւնից, երկու Թշնամի ազգութիւնների հոգեկան աշխարհներում գոյանայ խոր հաւատք դէպի այն երրորդ ոյժը, որը բախտի բերմամբ կոչուած է նրանց կառավարելու:

Միմիայն այն հաւատքը, թէ կեդրոնական իշխանութիւնը կըձգտի անշեղ իրագործել իրեն արուած բոլոր յանձնարարութիւնները և դրանց վրայ կըհնայի որպէս conditio sine quo non երկրը կատարելապէս խաղաղեցնելու վերաբերմամբ, միմիայն այն հաւատքը, թէ տեղական իշխանութիւնը սրանից յետոյ կաշխատի գտնել իւր վարչական պատասխանատու պարտականութեան բարձրութեան վրայ, միմիայն այն հաւատքը, թէ այսուհետև պիտի յաղթանակի օրէնքը, ճշմարտութիւնն ու արդարադատութիւնը, իսկ ոճիրը պիտի վերջանայ, պատժուի, միմիայն այն հաւատքը, թէ այսուհետև իշխանութիւնը պիտի ունենայ պահանջուած հզօրութիւնը և լինի մարդասէր ու արդարադատ,—ահա այսպիսի հաւատքը կարող է միայն եղբայրասպան անմիտ կռուին վերջ տալ և սկիզբ դնել խաղաղութեան ու բարեկարգութեան:

Շատ կուզէի հաւատալ, որ շահագրգռուած երեք կողմերն ևս կընպաստեն այդպիսի մի մթնոլորտ ստեղծելուն:

Երկու ազգութիւնների միջև գոյութիւն ունեցող փոխադարձ վստահութիւն ձեռք էր բերուած մեծամեծ զոհողութիւններով և երկար ժամանակի ընթացքում: Խռովարարների ճարպիկ ձեռքերին յաջողուեց դարերի կերտածը մի տարուայ մէջ հիմն ի վեր խորտակել: Որքան դիւրին է է ոչնչացնելը, նոյնքան էլ հեշտ չէ խորտակուածը վերականգնելը: Այդ կարող է անել միմիայն այն մեծ հաւատքն ու վստահութիւնը, որը ցանկալի է երրորդ շահագրգռուած կողմի մէջ գտնել: Մինչև այժմ դրա աննշան ապացոյցն անգամ չի եղել, իսկ թէ ապագան ինչ կբերի իւր հետ —ոչ ոք կարող է կանխատեսել:

⁂

«Իշխանութիւն և ժողովուրդ» խորագիրը կրող յօդուածում Թիֆլիս հրատարակուող «Современникъ» Թերթը իւր № 2-ում կանգ է առնում այն դերի վրայ, որ ժողովուրդը կատարել է ու կատարում է պետութեան մէջ, իշխանութեան հանդէպ:

Ժողովուրդը չի կարող անիրաւ լինել: Նա գործում է կեանքի անդառնալի օրէնքների ոյժով, օրէնքներ, որոնք նրանից պահանջում են շարժում դէպի առաջ: Իշխանութիւնն էապէս չի կարող այդ շարժման զգացակից լինել: Ժողովրդի պահանջները հարիւրաւոր կամ հազարաւոր տարի գլուխներում ծնունդ առած մտածողութիւններ չեն, այլ դրանք ներկայանում են անհրաժեշտութեան հրամանները, որոնց դանց առնելը ժողովրդին կառաջնորդի դէպի գերեզման: Մինչդեռ ժողովուրդը երբեք իւր մահը չի ցանկանայ, ընդհակառակը նա ուզում է ապրել:

Ճշմարտութիւնը ժողովրդի կողմն է:

Դրա ամենափայլուն ապացոյցն այն է, որ իշխանութիւնն կամենում է Պետ. Դումայի գոյութիւնն ապահոված լինել սոսկ պատիժներով միայն: Մեզ յայտնի չէ, թէ արդեօք մի որևիցէ ուրիշ կանոնադրութեան մէջ գոյութիւն ունի՞ մի այնպիսի յօդուած, որը պատիժ տրամադրի այն մարդկանց, որոնք ներկայացուցչական հաստատութեան մէջ կամենում են իրենց քաղաքացիական պարտքը կատարած լինել, սակայն ռուսական օրէնսդրութեան մէջ այսուհետև պիտի փայլի այսպիսի մի յօդուած. «տաժանակիր աշխատանքների է մատնւում և իւր բոլոր իրաւունքներից զրկւում է Դումայի կամ Խորհրդի այն անդամը, որ բռնութեամբ, սպառնալիքներով արգելք է հանդիսանում Դումայի կամ Խորհրդի զբաղումներին»:

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 3 մարտի.—Երեկ երեկոյեան, Վեհ. Հայրապ. հրամանով, վեհարան հաւաքուեցին դպրոցական-կրթականգործերին տեղեակ միաբանները և ճեմարանի ուսուցիչները մեր ուսումնարանական գործերի դրութեան մասին ընդհանուր խորհրդակցութեան: Վեհափառ Կաթողիկոսի դիւանապետ բարձր. հ. Յուսիկ վարդապետը ժողովը բաց անելով յայտնեց հետևեալը

«Վեհափառ Հայրապետին իբրև մտածման նիւթ է դարձել այժմ մեր դպրոցական խնդիրը, նրա ցանկութիւնն է, որ մեր ուսումնարանական հաստատութիւնները, սկսած տարրական ծխական դպրոցներից մինչև բարձրը՝ ճեմարանը, լուրջ քննութեան ենթարկուեն և նրանց ներքին կեանքը, ծրագիրն ու կանոնադրութիւնը կարևոր բարեփոխութիւններ կրեն, ուստի հաճեց հրամայել ինձ, արբազան հայրեր, արժանապատիւ եղբայրներ և յարգելի պարոններ, հրաւիրել ձեզ վեհարան ընդհանուր խորհրդակցութեան, թէ ինչ կերպով կարող ենք մենք լաւ հիմքերի վրայ դնել այդ դժուարին և պատասխանատու գործը...»:

Հոգևորականներից խօսեցին Սուքիաս և Գէորգ սրբազանները, խօսեցին Կարապետ, Գարեգին, Յուսիկ, Մխիթար և Բաբկէն վարդապետները. երևաց որ սուրբ հայրերս էլ, նուազ բացառութեամբ, աշխարհական ժողովականներից ոչ պակաս կողմնակից են բարեփոխումների մեր կրթական հաստատութիւնների ներքին կազմի մէջ: Օրինակ բարձր. Կարապետ վարդապետն ասաց

«Ժամանակները փոխուել են. հայ կեանքն ուժգին թափով առաջ է գնացել. փոխուել են և մեր երկրի կառավարչական պայմանները. մենք դարձեալ մեր դպրոցների լիակատար տէրն ենք. պէտք է որ մտածենք նրանց անհրաժեշտ կարիքների մասին: Կար ժամանակ, որ մենք մեր դպրոցներին հոգևոր անունը տալիս ենք հէնց միայն նրա համար, որ այլ կերպ դպրոցներ ունենալ չէինք կարող, իսկ այժմ փառք Աստուծոյ կարող ենք ունենալ և ոչ-հոգևոր դպրոցներ. այդ դեռ հարց է ի հարկէ, թէ մեր դպրոցները ինչ չափի հոգևոր են...»:

Շատ թէր և դէմ խօսակցութիւններից յետոյ, ժողովն եկաւ այն եզրակացութեան, որ մեր դպրոցների թէ կրթական և թէ տնտեսական գործերի բարեկարգութեան համար մի հիմնաւոր և միայուն որոշման յանգելու համար կարևոր է և անհրաժեշտ, ինչպէս որ Վեհափառ Հայրապետն է ցանկացել, մօտիկ ապագայում Ս. Էջմիածնում գումարել մի ընդհանուր ուսումնարանական ժողով, որին մասնակցեն կանոնաւոր հայաշատ քաղաքներից եկած պատգամաւորներ՝ ընտրուած ուսուցիչներից, հոգաբարձուներից և մեր դպրոցական գործերին տեղեակ անձերից, թուով 60—70 հոգի:

Այսպիսով ուրեմն յոյս ունենանք, որ Վեհափառ Հայրապետի հրամանով և կոնդակով առաջիկայ մայիսի սկզբներին Ս. Էջմիածնում գումարուելիք այդ ուսումնական ժողովը, որպէս ազգի առաջ մի հեղինակաւոր և պատասխանատու մարմին, պատրաստականութիւն և հնարաւորութիւն պիտի ունենայ թէ մեր (ռուսահայոց) ստորին և թէ միջնակարգ և բարձր դպրոցների համար մշակելու հիմնաւոր, հաստատուն և որ ամենագլխաւորն է ժամանակի առողջ ոգուն և արդարացի պահանջներին բաւարարութիւն տուող ընդհանուր ծրագիր և կանոնադրութիւն, վերջ տալու մամուլի և հասարակութեան մէջ ներկայումս երևացող շատ անգամ արդար և շատ անգամ կրքոտ և կողմնակալ կարծիքներն ու պահանջներին:

Գօշ

## ՆԱՄԱԿՆԵՐ ՔԻՇՆԵՒԻՑ

### I

Շատ վաղուց չէ, ինչ խօսւում էր Քիշնեւում հայկական երեկոյթ կազմակերպելու մասին, որը, եթէ չենք սխալւում, առաջին անգամը պիտի կայանար այս հայ գաղութում: Ձեռնարկողներն էին մի խումբ ուսանողներ և դպրոցական երիտասարդներ: Բայց ինչ հայկական երեկոյթ կարող էր լինել, քանի որ նրանք ծանօթ չեն ոչ հայ լեզուին, ոչ գրականութեանը, ոչ երգերին, ոչ պատմութեանը և ոչ էլ հայ կեանքին. իսկ հայ դպրոցի ճեմարանաւարտ վարժապետը չի՛ մասնակցում... Այսպիսով լոբին ցանեցին, բակլայ դուրս եկաւ.—հայկական երեկոյթը ցանեցին, դուրս եկաւ մալառուսական ներկայացում հայոց օգտին: Եռանդ կար մատղաշ երիտասարդների մէջ և մասամբ էլ վերջին դէպքերի շնորհիւ սթափուել ու զգացել էին, որ հայ են, մայր երկրում տանջուող հայերի եղբայրներ: Եւ զգայուն սրտերը պարտք համարեցին այս կամ այն կերպ օգնած լինել Կովկասում վերջին աղէտներից Թշուառացած իրենց ազգակիցներին և արին այն, ինչ որ կարող էին:

Ամսիս 10-ին մալառուսական խումբը ներկայացնելու էր Կրոպիվնիցկու յայտնի «Невольникъ» դրաման մալառուսական լեզուով: Երիտասարդները գնեցին այդ ներկայացումը և ներկայացրին Կովկասի աղէտեալ և Քիշնեւի աղքատ հայերի օգտին: Քիշնեւի աղքատ հայերի օգտին ևս, որովհետև կառավարութիւնից թոյլտուութիւն խնդրելու համար դիմել էին գաղութի երկու երիտասարդ ազդեցիկ հայերի, որոնք «Քիշնեւի աղքատախնամ ընկերութեան» անդամ են: Վերջիններս համաձայնել էին մասնակցել, եթէ ստացուելիք օգուտից բաժին կը հանուէր և Քիշնեւի աղքատներին: Հետաքրքրական է իմանալ, ինչո՞ւ այդ մեծամեծ պարոնները պատրաստ թիքի վրայ պրծան: Եթէ նրանք իսկապէս աղքատների մասին հոգացող էին, ինչո՞ւ մինչև այժմ որևէ երեկոյթ կազմելու կամ այլ միջոցի չեն դիմել նման նպատակով և հէնց այժմ, երբ ահագին գումարներ պէտք են Կովկասի տնտեսական անկեալ դրութիւնը բարձրացնելու, վրայ պրծան այդ առթիւ գումարուելիք չնչին գումարից պատառ հանելու, այն էլ ինչքա՜ն.—որոշուած է 60% միայն ուղարկել Կովկաս, իսկ 40% վերցնել յօգուտ Քիշնեւի աղքատների: Կարծում ենք օգտուել ուրիշի աշխատանքից՝ ձրի Թանի վաղել կընշակէ, որ պատիւ չի բերել յիշեալ երիտասարդների անուան: Կովկասի աղէտեալներին հասանելիք 60%-ը պիտի ուղարկուի տեղիս նահանգապետի միջոցով Կովկասի փոխարքային՝ հայերին բաժնելու և սա՛ նրա համար, որ նահանգապետից իրաւունք (թոյլտուութիւն) խնդրողները, տեղեակ չլինելով Վեհափառ Կաթողիկոսի հաստատած Թիֆլիսի յանձնաժողովի գոյութեան մասին, ոչ մի հիմունք չէին ունեցել մերժելու նահանգապետի այդ առաջարկը:

Ինչ և է, փաստ է ներկայացումը յօգուտ հայերի: Ներկայացումից յետոյ եղան պարեր (ոչ ազգային), կային այլ խաղեր, փարթամ բուֆէթ: Բոլոր ծախսերը դուրս եկած զուտ արդիւնք մնաց մօտ 1100 րուբլի: Ներկայացմանը ներկայ էին տեղիս համարեա բոլոր հայերը: Պէտք է նկատել, որ վերջին դէպքերը, ինչպէս են եկեղեցական կալուածների առումն ու այդ առթիւ եղած յուզմունքները, նոյնպէս և վերջին աղէտները տեղական գաղութն ևս մասամբ ցնցեցին, և այժմ գաղութի հայերը հայկական կեանքով հետաքրքրուելու նշաններ են ցոյց տալիս: Օգտուեցին այդ հանգամանքից ռուս հոգով մեծացած, հայ կեանքից նոր նոր միայն կայծեր առած երիտասարդները և յաջողեցրին ներկայացման գործը: Տեղիս գաղութի ազգային կեանքում դա իւր տեսակի մէջ առաջին նորութիւնն էր, որը և անցաւ յաջող:

Այս առթիւ ամենախորին շնորհակալութիւն երեկոյթը կազմակերպող երիտասարդութեանը: Հաւատում ենք, որ այսուհետև բուն մտքով հայկական երեկոյթներ կը կազմակերպուին աւելի մատչելի ու նպատակայարմար ծրագրով, որոնք և հայ կեանքի հետ ծանօթանալուն ու մօտենալուն խթաններ կլինեն գաղութի հայկական կեանքում:

### II

Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդը, ի նկատի առնելով Կովկասի հայոց տնտեսական ծանր դրութիւնը, միտք է յղացել այս անգամ արդէն խոշոր օգնութեան ձեռք մեկնելու աղէտեալներին (նոյն խորհուրդը 5000 ր. Վեհ. Կաթ. հաստատած յանձնաժողովին է ուղարկել, իսկ 3000 ր. Գանձակի աղէտեալ հայերին): Այս կէտում համաձայն են խորհրդի բոլոր անդամները, իսկ յատկացնելիք գումարի վերաբերմամբ՝ տարբեր են նրանց կարծիքները, ինչպէս այդ երևում է ժողովի արձանագրութիւնից: Կարծիքների տարբերութիւնը 100,000 ր. բաց թողնելու մասին է: 100,000 ր. բաց թողնելու դժուարութիւնն այն է, ա) որ գումարի մեծութեան պատճառով ստիպուած պիտի լինեն բուն դրամագլխին դիպչելու, իսկ կանոնադրութեամբ խորհուրդը միայնակ ձեռնհաս չէ այդ անելու, բ.) բուն դրամագլխին դիպչելու խնդրում պէտք պիտի լինի ծախել արժէքաւոր թղթեր, որի մէջ այժմ 30% վնաս կունենան-ին 100000-ր. 30000, գ. այդպիսի մեծ գումար ծախսելու, մանաւանդ դրամագլխից վերցնելու դէպքում Պետերբուրգի ամբողջ համայնքի ծխական խորհուրդն ևս պիտի ձայն ունենայ: Կանոնադրութեան զօրութեամբ Պետեր. եկ. խորհրդի վճիռները վաւերացնում կամ իւր veto-ն է դնում Բեսարաբիայի թեմի առաջնորդը միայն. Կաթողիկոսի մասին չի յիշատակւում: Բայց այս դէպքում խորհուրդը երևի Վեհ. Կաթողիկոսին էր դիմել նրա, ազդեցութեամբ կամ հրամանով իւր դժուար դրութիւնից ելնելու մտքով: Միևնոյն ժամանակ ուղարկելով ժողովի արձանագրութիւնները Բեսար. թեմի առաջնորդին, խնդրել էր կարգադրութիւն: Վեհ. Կաթ. ևս իւր կոզ-

---

հանեց և լուռ, գլխաբաց տարաւ, տուն հասցրեց նրան»: Դրանից յետոյ Անգլիայի պատմութեան մէջ չի եղել մի դէպք, որ այդ երկու կուսակցութիւնների կերպարանքն այնպէս սուր կերպով որոշէր, ինչպէս վերոյիշեալ դէպքն էր:

Մենք ասացինք, որ դեռ ևս Գլադստոնի օրով ազատամիտ կուսակցութեան բանակից անցնում էին պահպանողական կուսակցութիւնը, բայց երբ ազատամիտ կուսակցութիւնը պարտութիւն կրեց, կառավարական շրջանները նոր ուղղութիւն մտաւ, որ յայտնի է իմպերիալիզմ անունով կամ ազատամիտ իմպերիալիստների կուսակցութիւն:

Երկար տարիներ Անգլիան տիրապետած լինելով համաշխարհային շուկաներին՝ այնպիսի խոշոր գումարներ էր կիտել իւր մէջ, որ առանց գործադրութեան էին մնում այնտեղ: Այդ աւելորդ գումարները մասամբ օտար պետութիւններին էին պարտք տալիս, մասամբ էլ գործ էին ածում նոր, երիտասարդ արդիւնաբերող երկրների վրայ՝ բնական հարստութիւնները շահագործելով: Արտասահմանում զետեղուած գումարներից Անգլիան ներկայումս առ նուազն 1.200.000.000 ր. եկամուտ ունի տարեկան: Այդպիսով Անգլիան ձեռք է բերել մի առանձին դիրք: Գլադստոնի մահից յետոյ այդ նոր ուղղութիւնը, որի ծրագիրն այն է, որ Անգլիան գերակշռող լինի թէ Եւրոպայում և թէ ուրիշ երկրներում, որ նա պահպանէ իւր ապրանքներն արտահանելու համար ունեցած տեղերն և նորերը ձեռք բերէ,—աւելի ևս սաստկացաւ, և սկզբում նրա ներկայացուցիչը Ռոզբերին էր, բայց յետոյ հրաժարուեց պարագլուխ լինելուց:

Անգլիայի վերջին տարիների քաղաքականութիւնն այդ դրօշակի տակ էր կատարւում: Եգիպտոսն ու Հարաւային Աֆրիկայի փոքրիկ հասարակապետութիւնների նուաճումն այդ քաղաքականութեան արդիւնք էր: Սակայն երկարատև լինել այդ քաղաքականութիւնը չէր կարող այն երկրում, որ ազատ հաստատութիւններ ունի: Իմպերիալիզմի շնորհիւ աճում են պետական պարտքերն, աւելանում են հարկերն և ազգային արդիւնաբերութեան ու առևտրի զարգացման խոչընդոտ են լինում: Եւ հազիւ 10—15 տարի անցաւ, Անգլիան այժմ մտածում է, թէ ինչպէս վերականգնէ մօտ անցեալում ունեցած իւր փառաւոր պետական վարկը և թէ ինչպէս ծանր հարկերի աճեցողութեան առաջն առնի: Յառաջադէմ դասակարգերը մատնանիշ են անում, թէ դրա համար հարկաւոր են սօցիալական բարենորոգումներ, ժողովրդական և բարձրագոյն լուսաւորութիւնն աւելի ևս բարձրացնել, գրաւոթիւններ տարածել ժողովրդի մէջ և այլն: Բայց այդ հարցն այլ կերպ է վճռում Չեմբերլէնը: Նա ասում է, թէ Անգլիայի վտանգաւոր մրցակիցներն են միջազգային շուկաներում Միացեալ Նահանգներն և Գերմանիան, և դրա պատճառն այն է, որ նրանք հովանաւորում, պաշտպանում են իրենց երկրների արուեստակերտութիւնը, հետևաբար Անգլիան էլ պիտի թողնի ազատ առևտրի դրօշակը և դիմի հովանաւորութեան կամ պրոտեկցիոնիզմին: Այսպէս իմպերիալիզմից ծագում է պրոտեկցիոնիզմը, որ, ենթադրւում է, պիտի փրկէ անգլիական արդիւնաբերութիւնն օտարազգի մրցութիւնից, պիտի անգործ բանուորների թիւը պակասեցնէ և բանուորի օրավարձը բարձրացնէ: Միևնոյն ժամանակ մաքսերն այնքան եկամուտ կտան Անգլիային, որ հընարաւոր կլինի ծերացած բանուորներին պետական գանձարանից թոշակ տալու օրէնքն էլ անցկացնել: Բայց Չեմբերլէնի համար ոչինչ նշանակութիւն չունի այսօր ամենախորին համոզմունքով ապացուցանել այն, ինչ որ երեկ հերքում էր: Մինչև 1886 թ. ծայրայեղ արմատական էր, և այդ թուականին նա դուրս է գալիս Գլադստոնի մինիստրութիւնից, կորստաբեր համարելով հոմ-րուլի նախագիծը, որ մշակել էր Գլադստոնը: Չեմբերլէնի օրինակին հետևեցին մի քանի տասնեակ ազատամիտներ, որոնք առաջ կազմեցին ազատամիտ-ունիօնիստական կուսակցութիւն, իսկ յետոյ ձուլուեցին պահպանողականների հետ: Այդպէս գնալով 1895 թ. արդէն Սոլսբերիի մինիստրութեան ժամանակ կարևոր անդամ էր—գաղութների մինիստր: Այսպէս Չեմբերլէնը որոշ չափով թուլացրեց ազատամիտ կուսակցութիւնը, որ իւր բոլոր թերութիւններով հանդերձ յառաջադէմ կուսակցութիւն էր: Իսկ այժմ էլ նա զբաղուած է ազատամիտ-ունիօնիստների կուսակցութիւնը քանդելով, որի պարագլուխն երկար տարիներ ինքն էր:

Այսպէս՝ ազատամտութիւնն կամ ազատամիտ կուսակցութիւնը թէպէտ յետ չէ գնում, բայց պահպանողականութիւնն անշուշտ առաջ է գնում իւր կուսակիցների թիւն օրէցօր շատացնում է, և այդ երևոյթը, ինչպէս ասացինք, նկատելի է 1886 թ., երբ ազատամիտ-ունիօնիստները հեռացան ազատամիտ կուսակցութիւնից:

Բանուորական կուսակցութիւն, այսինքն մի այնպիսի կուսակցութիւն, որ պարլամենտում զուտ բանուոր դասակարգի շահերը պաշտպանէր, ինչպէս Գերմանիայում, Բելգիայում կամ Ֆրանսիայում է Անգլիայում չկայ: Ճիշտ է, համայնքների պալատում մի տասը, տասնհինգ մարդ կլինին, որպէս ներկայացուցիչներ, բայց այդ խմբի մէջ անկախ կուսակցութիւն կազմելու սաղմն անգամ չկայ, կուսակցութիւն, որ իւր դասակարգի որոշ ծրագիրն ունենար: Այդ բանուոր պատգամաւորներին նրանց շրջաններն ուղարկել են ոչ թէ ընդհանուր բանուոր դասակարգի շահերը պաշտպանելու, այլ, ընդհակառակը, ուղարկող շրջանի նեղ շահերը, որոնք կարող են և հակառակ լինել ուրիշ շրջանների բանուորական շահերին: Այսպէս՝ մի շրջանի ածխահանքերի բանուորները՝ կազմակերպուած մի հզօր տրեդիւնիօն են կազմում, երկու բանուոր պատգամաւոր են ուղարկում, որ նրանք կռուեն օրեկան ութը ժամ բանելու դէմ, որովհետև այդ նրանց ձեռնտու չէ: Մի ուրիշ խումբ, նոյնպէս կազմակերպուած, ուղարկում է իւր ներկայացուցիչներին, ընդհակառակը, 8 ժամեայ աշխատանքը պաշտպանելու: Հաւասարապէս և ուրիշ արհեստների տրեդիւնիօններն ուղարկում են իրենց ներկայացուցիչներին յատուկ նրա համար, որ այս ինչ կամ այն ինչ խմբերի շահերը պաշտպանեն: Իսկ ինչ վերաբերում է ընդհանուր պետական կամ ընդհանուր ազգային հարցերին՝ բանուորները լիակատար ազատութիւն են տալիս իրենց ներկայացուցիչներին: Ի հարկէ, քանի որ բանուորական ներկայացուցիչները չունենն ընդհանուր ծրագիր, չունենն ընդհանուր գաղափար, վերոյիշեալ հարցերի ժամանակ միանում են ազատամիտներին, իսկ երբեմն էլ պահպանողականներին: Ահա հասարակ դրանք չխօսկան ներկայացուցիչներ են. խօսք են խնդրում միայն այն ժամանակ երբ իրենց շրջանի շահերին են դիպչում:

(Կը շարունակուի)

մից հեռագրով հրամանագրում է շտապեցնել խնդրի վճիռը: Սրբ. առաջնորդն արձանագրութիւնների հետ ծանօթանալուց յետոյ, որ վճիռ չկար, այլ անդամների կարծիքները վերցրեալ տարբերութեամբ, և տեսնելով խնդրի խիստ փափուկ լինելը՝ հեռագրում է խորհրդին, որ ինքը համաձայն է և թոյլ է տալիս օգնել Կովկասի թշուառ հայերին, սակայն գումարի քանակը որոշելը թողնում է խորհրդի կամքին: Նման մօքով ս. առաջնորդը պատասխանում է և Վեհ. Կաթողիկոսի հեռագրին: 100,000-ի խնդիրը դեռ առկախ է և մինչև այժմ առաջնորդը չի ստացել վճռական պատասխան:

Մ. Աւեան

Քիշնև, 25 փետր.

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

«Նոր-Դար»-ի № 35-ում կարդացի պ. Յ. Թումանեանի քննադատութիւնը պ. Վանցեանի՝ «Հայ հեղինակներ» գրքի մասին: Գիտենալով, որ պ. Վանցեանը փոփոխութիւն մտցրել չէ իր գրքի մէջ՝ Աբովեանի գրուածների վերաբերմամբ, շատ հաւանական է, որ ես եմ սխալները թողել, որովհետև ես եմ արտագրողը եղել:

Վ. Խանամիրեան

II

«Նոր-Դար»-ի № 30-ի մէջ տպուած էր Դերբենտից մի թղթակցութիւն, որտեղ պ. թղթակիցը անտեղի կերպով պարսաւել է աւագ ուսուցիչ Արշակ Թադէոսեանցի արտասանած ճառը Վարդանանց տօնի առիթով:

Նա բոլորովին այս խօսքերը չի արտասանել և չի անուանել պահպանողականներին *) «դաւաճան» և «խաւարամիտ»: Մենք բոլորս ներկայ էինք հանդէսին և բողոքում ենք այդ թղթակցի՝ աւագ ուսուցչի դէմ գրածի վերաբերմամբ. ուրեմն ձեզ ևս անտեղի կերպով սխալմունքի մէջ է ձգել, որով հիւանդ էք համարում մեր աւագ ուսուցչին:

Դ. Պապովեան եւ 24 ստորագրութիւն:

Դերբենդ

III

«Նոր-Դար»-ի № 34 լոյս տեսած պ. Հ. Բ.-ի Նոր-Բայազիտից ուղարկուած թղթակցութիւնն ինձ են վերագրում իբրև «Նոր-Դար»-ի թղթակցի, ուստի խոնարհաբար խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ՝ սոյն երկտողովս յայտնել ի գիտութիւն նոր-բայազիտցոց, որ յիշեալ նամակի հեղինակութիւնն ինձ չէ պատկանում, և որ ես ոչ մի կապ չունեմ յօդուածագրի պարոնի հետ *):

Ռուբէն Ազարեանց

Նոր-Բայազիտ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

**Արտասահմանեան մամուլը Ռուսիայի մասին.**— Գերմանական «Nat. Zeit.» թերթն ընդարձակ յօդուած է նուիրում ռուսական ագրարային հարցին: Հրապրի կարծիքով, Պետակ. Դումայի ամենածանր ու պատասխանատու աշխատանքներից մին է ագրարային հարցի բարեյաջող լուծումը, որը ոչ մի պայմանով չի կարելի շատ ուշացնել: Մօտաւոր անցեալը ցոյց է տալիս, որ գիւղացիական յեղափոխութիւնն արդէն սկսուել է և նա բոլորովին ուրիշ ընթացք կըստանայ, եթէ կառավարութիւնը դանդաղի գործնական միջոցներ ձեռք առնել այն դիմագրաւելու համար:

«Ռուսական գիւղացին,—շարունակում է գերման լրագիրը,—կանգնած է անդունդի բերանը: Եթէ կառավարութիւնը չշտապի նրան օգնութեան հասնելու, նա պէտք է սովորի ինքն իրեն օգնելու, եթէ չի ցանկանում սովամահ լինել: Նոր չէ, որ թէ կառավարութիւնն և թէ մամուլը միջոցներ են փնտռում ռուս գիւղացուն իր ընկած վիճակից բարձրացնելու, աշխատելով ապահովել նրան քրոնիքական երաշտութիւններից, հրդեհների և այլ արկածների դէմ:

«Գիւղացու հողը նոյնքան ուժասպառ վիճակի մէջ է, որքան և ինքը գիւղացին՝ շարունակ կրկնուող սովերից: Մանուկների մահացութիւնն աներևակայելի չափերի է հասնում. Նրա խեղճ ու կրակ սարքուածքը—անասունները, ամենն էլ ծախծխուած են: Նա գտնւում է մի այնպիսի վիճակում, որից վատթարագոյնն երևակայել անկարելի է: Այդ վիճակի արդիւնք են նրա ծուլութիւնը, հարբեցողութիւնն ու յուսահատութիւնը: Ռուս գիւղացուն իր այդ տափակ դրութիւնից դուրս բերել համար հարկաւոր են ծանրակշիռ և կտրուկ միջոցներ. կէս միջոցներն այստեղ ոչ մի գործ չեն կարող անել: Կառավարութիւնը գիւղացութեան խոստացել է նոր հողային բաժանում: Դա միայն կարող է միայն գիւղացու կենսական այդ կարիքը հոգալ: Սակայն, հարց է, թէ կառավարութիւնը ինչ եղանակով պէտք ուզի իր այդ խոստումը կատարել: Քսան տարի շարունակ մրտտուած հաշուառոր ծրագրներով անկարելի եղաւ գիւղացիական հողաբաժինները ընդարձակել: Ուրեմն, ինչ ճանապարհով պէտք է ցանկանան գիւղացու հողային քաղցը անցնել: Եթէ մինչև իսկ կառավարութեան յաջողուի այդ հրաշքը գործել այնուամենայնիւ, դա ըլլինի այդ հսկայական գործի մի մասը միայն:

«Հողը տալուց յետոյ, նրան պէտք է առաջադրել նրա վրայ աշխատելու, այն շահագործելու հնարաւորութիւն, ուրիշ խօսքով, հարկաւոր է նրան նախապատրաստել արդիւնաւէտ աշխատանքի համար, հարկաւոր է ժողովրդական մասսաներին մատակարարել բարոյական կրթութիւն:

Կառավարութիւնը, գիւղացութիւնը ճորտութիւնից ազատելուց յետոյ, ահագին սխալ է գործել: Նա այդ հասակաւոր երեխային յանձնել բաղդին և շատ քիչ խնամք ունէր նրա զարգացման ու կրթութեան վրայ: Իսկ այդ մեծ թերթն լրացնելու համար տարիներ, տասնեակ տարիներ են հարկաւոր»:

Այսպէս, գերման լրագիրը, ռուսական հողային հարցի լուծումը խոշոր դժուարութիւնների ենթակայ համարելով գտնում է, որ նրանից է կախուած ամբողջ Ռուսիայի ապագան:

—

**Ֆրանսիական մինիստրութեան անկումը.**—Մարտի 7-ին (ն. տ.) պալատի նիստի ժամանակ Հազբրուկում կատարուած եկեղեցական գոյքերի ցուցակագրութեան առիթով եղած հարցապնդումի պատճառով հակաճառութիւնները սուր կերպարանքներն ստանում և երբ պատգամաւորներից մէկի առաջարկութեամբ կառավարութեան, ներքին քաղաքականութիւնը քննադատութեան է դրւում Ռուվիէի կաբինետը, 33 ձայնի փոքրամասնութիւն է ստանալով, 267-ի, պարտաւորուում է իր հրաժարականը տալ: Ֆրանսիական վերջին խօսքը տարւայ մինիստրական կեանքի մէջ այդ միանգամայն անակնկալ տապալումը առաջինն է:

Հնի տապալումից յետոյ, այժմ արդէն առածւում է նոր կաբինետի կազմակերպութեան մասին, որը յանձնուել է Ճախակողմեան կուսակցութիւնների ներկայացուցչական կողմի նախագահին:

Ֆրանսիական մինիստրական կաբինետի յանկարծական տապալումն շատ վատ տպաւորութիւն է առաջ բերել անգլիական դիւանագիտական շրջաններում, դրանով հանդերձ, անգլիական մամուլն այն կարծիքին է, թէ Ֆրանսիական նոր կաբինետը կարող չլինէ փոփոխութիւն մտցնել երկրի կառավարութեան արտաքին քաղաքականութեան մէջ:

## «ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾԱԿ.

6 մարտի

ԹԵՀՐԱՆ, 5 մարտի.—Սէիստանից հասած տեղեկութեանց համաձայն, չուման թուլանում է. 20 օրուայ մէջ վարակման 17 դէպք է միայն պատահել: Առողջացել է 8 հոգի, հիւանդ մնացել է 5-ը: Սակայն իշխանութեան աններելի անուշադրութեան պատճառով ուտելեղէնի պաշարներ են գնուած վարակուած գիւղերից, և չուման անցել է Մուսրոթարա, ուր հիւանդացել է 10 հոգի: Առողջապահական խորհուրդը նախազգուշական խիստ միջոցների է ձեռնարկել: Նախկին դեսպան Շպէյերը մեկնեց Թեհրանից:

ՆԻՑՑԱ.—Մարտի լոյս 5-ի գիշերը վախճանուեց պրինց Կոնստանտին Պետրովիչ Օլդենբուրգսկին:

ԼԱՆՍ.—Ճաշից յետոյ գործադուլ անող 1000 հոգի կարմիր դրօշակներով ուղեկցեցին դէպի Բիլի և Մանտինի գերեզմանատունը, որտեղ հանքային պայթմանը զոհ գնացած բանուորների գերեզմանների ճառեր խօսեցին. գործադուլ անողները ապա հաւաքուեցին մի բնակարանում, ուր նորից արտասանուեցին դրգռիչ բնաւորութիւն ունեցող ճառեր: Անկարգութիւններ չեղան: Անցեալ գիշեր զօրքը ժանդարմներին օգնութեան հասաւ: Ինժեներների մասնաժողովի հաղորդած տեղեկութեան համաձայն, հանքերում առաջացած հրդեհը մեկուսացրած է գրեթէ: Յոյս կայ, որ շուտով կը վերսկսուի դիակները փլատակների տակից դուրս բերելու գործողութիւնը:

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ.—Ընծովեայ մակոյկների գործարանում հրդեհ ծագեց, որին զոհ գնացին ահագին քանակութեամբ նիւթեղէն և մեքենաներ:

Նորերս այստեղ հասած պլաստուն կազակները ծովի ճանապարհով հայրենիք են վերադարձած: Ամեն օր Մանջուրիայից հասնող զօրամասերը շոգենաւերով հայրենիք են ուղարկւում:

ԿԱԼՈՒԳԱ, 6 մարտի.— Ամբողջ նահանգում և Մալցևի բոլոր գործարաններում բանուորների ընտրութիւնները կատարուեցին նշանակեալ ժամանակին օրինաւոր կարգով:

ՕՉԱԿՈՎ.—Առաւօտեան լէյտենանտ Շմիդտը և երեք նաւաստի հրացանազարկ եղան:

ՕԴԷՍՍԱ.—Ժանդարմական վարչութեան շինութեան տակ գտնուած դատարկ բնակարանում առաւօտեան 11 ժամին ներս ընկաւ դժոխային մեքենան, քանդելով առաստաղը: Սաստիկ վնասուած է ժանդարմական գնդապետի առանձնասենեակը: Մեքենայի փշրանքով թեթև վիրաւորուած են 10 անցորդ. ժանդարմական վարչութեան մէջ վնասուածներ չկան:

ԿԵՐՉ.—Ազովեան ծովի վրայ սառուցը հալուեց: Նաւագնացութիւնը բացուած է. նաւերի գնալ-գալը կատարւում է անվտանգ:

ՊԼՈՑԿ. — Կազմուեց հրէական ազգային կուսակցութիւն: Նախընտրական գործունէութեանն անտարբեր են վերաբերւում քրիստոնեայ կուսակցութիւնները:

ԲՈՒԴԱՊԵՇՏ,.— (Կորր. բիւրօ) Ֆէյերվարին յայտնեց գաւառներից եկած պատգամաւորներին, որ կառավարութեան նպատակն է՝ օրէնսդրական կանոնաւոր գործունէութեան վերականգնումը. սակայն նոր ընտրութիւնները կարող են նշանակուել միայն այն դիպուածում, եթէ հասարակութեան տրամադրութեան մէջ յեղաշրջում առաջ գայ: Կառավարութեան հրատարակած տեղեկագրի մէջ մատնացոյց է արւում, որ դաշնակցական կոմիտէի երեկուան որոշումը հանդիսանում է համարձակ ժխտում հանրածանօթ փաստերի: Կոմիտէն հրամանագրում էր քաղաքային պաշտօնեաներին ու ոչինչ համարել և չենթարկուել նահանգապետներին և արքայական կոմիսարներին, ընդ նմին խոստացուած էր պետութեան միջոցներից վճարել այն վնասները, որոնք կարող էին տեղի ունենալ անհնազանդութեան դէպքում,—հէնց որ դաշնակցութիւնը իշխանութիւնը ձեռք առնէր: Կոմիտէն հրամայեց չվճարել հարկերը, չտալ նորակոչ զինուորների կարևոր վկայականներ, առաջարկեց զօրքի շարքերի մէջ գտնուող անձերին չենթարկուել օրինական հրամաններին, անվաւեր յայտարարեց առևտրական դաշնագրները: Դրանով կոմիտէն յափշտակեց վարչութեան, կատարողական և նոյն իսկ օրէնսդրական իշխանութիւնների իրաւունքը: Այժմ մերժելով այս բոլորը, կոմիտէն իր սեփական ձեռքով անուանարկեց իր վտանգաւոր ու վնասակար գործունէութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Պաշտօնական: Մինիստրների խորհրդի մարտի 5-ի ժողովը նուիրուած էր գիւղացիների խնդրին: Գիւղացիների գործի վճիռը կառավարութեան պարտաւորութիւնն է, սակայն գիւղացիների խնդրի հետ միասին սերտ կապուած են և մի շարք ուրիշ ռէֆորմներ, օրինակի համար՝ տեղական վարչութեան վերակազմութիւնը, զեմստվային գործի համա ղեկավարութիւնը և կայսրութեան դատական բաժնի կեդրոնացումը: Ուստի խորհուրդն անհրաժեշտ համարեց ընդհանուր համաձայնութիւն կայացնելու համար կազմել առանձին յանձնաժողով երկրագործութեան գլխաւորի նախագահութեամբ միւս հաստատութեանց ներկայացուցիչների մասնակցութեամբ և ապա նորից քննել ամբողջ գործը Մինիստրների Խորհրդում Խորհուրդը սակայն հնարաւոր համարեց ընդհանուր խնդրից անջատել այն որոշումները, որոնք պէտք է հրատարակուին համաձայնացնելու շինարարական գործադրուող օրէնքները փետր. 3-ին 1905 թ. Բարձրագոյն մանիֆէստին: Մանիֆէստի զօրութեամբ հետևող փոփոխութիւնը յունուարի 1-ից 1907 թ. վճարների վերաբերեալ ոչնչացնում է առանձին գիւղացիների ունեցած իրաւունքը գիւղական հողերի վրայ ու նրանց իրենց կամքով կառավարելը, որքան նրանք անհրաժեշտ են պետական կարիքների համար: Անհնարին համարելով առանց Պետական Դումայի ձեռնամուխ լինել այն փոփոխութիւններին, որոնցով շօշափւում են գիւղացիական կեանքի ամենակարևոր կողմերը, Մինիստրների Խորհուրդը արդեւք չէր գտնում, որ անյապաղ ձեռնարկուէր մի քանի որոշումների քննութեանը, որոնք իսկապէս վերաբերուած են մանիֆէստով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ուկազ կառավարչական սենատին մարտի 4-ից: 3-ին նոյեմբերի 1905 թ. մանիֆեստով գիւղական բանկի վրայ դրուած պատգամաւորութիւններն կատարելուն, օգնելու և գիւղացիների հողեր գնելու գործը թեթևացնելու նպատակով Մենք բարւոք համարեցինք կազմել նահանգական և գաւառական առանձին մասնաժողովներ նրանց բոլորի գործունէութեան ուղղութիւնը կենտրոնացնելու համար հողակազմակերպութեան և հողատիրութեան գլխաւոր վարչութեանը կից հաստատուած կոմիտէի մէջ: Այս յանձնաժողովների վրայ մենք պարտք ենք դնում աջակցելու բնակչութեանը սահմանեալ օրինական կարգով հողատիրութեան և հողից օգտուելու գոյութիւն ունեցող թերութիւնները վերացնելու, համաձայն տեղական պայմանների: Ի մի գումարելով սոյն յանձնաժողովների մէջ կառավարչական պաշտօնեաների և հասարակական գործիչներին ներկայումս սոյն գործին մասնակցելու հրաւիրուած են նա և գիւղական բնակչութեան ներկայացուցիչները: Մենք լիայոյս ենք, որ տեղական բոլոր ոյժերի միահամուռ աշխատանքով հետզհետէ կը լրացուին գիւղական բնակչութեան էական կարիքները անհրաժեշտ պայմանով պաշտպանելու մասնաւոր կալուածատէրերի օրինական իրաւունքները»: Համաձայն ուկազի գաւառական հողակազմակերպող յանձնաժողովները կայանում են գաւառական ազնուականութեան պարագլխի նախագահութեամբ յանձնաժողովի մասնակցում են զեմստվօյի վարչութեան նախագահը, հողակազմակերպութեան գլխաւոր վարչութիւնից նշանակուած մշտական մի անդամ, շրջանական դատարանի մի անդամը, կամ գաւառական հաշտարար համագումարի նախագահը, ուդելնի հաստատութեան անդամը, եթէ կան գաւառում ուդելնի հողեր, հարկային վերատեսուչը և զեմստվային մեծաւորը, գաւառական զեմստվային ժողովից ընտրուած երեք անդամ, գիւղացիների երեք ներկայացուցիչ, որոնք նշանակւում են գիւղական համայնքների ժողովում ընտրուած թեկնածուներից: Նահանգական յանձնաժողովները կայանում են՝ նախագահութեամբ նահանգապետի. մասնակցում են՝ նահանգական ազնուականութեան պարագլուխը, նահանգական վարչութեան նախագահը, հողակազմակերպութեան գլխաւոր վարչութիւնից նշանակուած մշտական մի անդամ, պետական պալատի կառավարիչը, գիւղական և ազնուականների բանկի կառավարիչները, նահանգական քաղաքի շրջանական դատարանի անդամներից մէկը, նահանգական կամ գիւղական գործերի համար հիմնուած ատեանի մշտական անդամներից մէկը, ուդելնի շրջանի կառավարիչը, նահանգական ժողովից վեց ընտրեալներ, ի թիւս դրանց երեք գիւղացի, որոնք ունեն նադելի հող: Գաւառական յանձնաժողովները պարտաւոր են պարզել գիւղացիների հողատիրութեան դրութիւնը, աջակցելու գիւղական բանկին. Նահանգական յանձնաժողովներն ի մի են ամփոփում գաւառական ժողովների գործունէութիւնը, որոշում են տարաձայնութիւնները: Հողակազմակերպութեան գլխաւոր վարչութեան կից կազմւում է կոմիտէ հողակազմակերպական գործերի համար կազմուած պետական բանկի կառավարչի նախագահութեամբ, որին մասնակցում են՝ ազնուական և գիւղական բանկի կառավարիչները, ներկայացուցիչներ Պալատական Դրան, ներքին գործոց, ֆինանսների, արդարադատութեան մինիստրութիւնների, հողակազմակերպութեան գլխաւոր վարչութեան, պետական կոնտրոլի: Կոմիտէն բաց է անում գաւառական և նահանգական յանձնաժողովներ, պարտաւորումներանց իր անձնական հայեցողութեամբ կամ թէ նահանգապետների, զեմստվային ժողովների և նոյն իսկ յանձնաժողովների միջնորդութեամբ պարզելու կառավարչական աջակցութեան պահանջը՝ գաղթեցնելու պետական հողերի վրայ, մասնակցելու գիւղացիներին պետական հողերի կապալով տալու գործին, աջակցելու գիւղական հասարակութեանց՝ բարելաւելու հողատիրութեան պայմանները, միջամտութիւնը հաշտութեամբ աւարտելու վիճելի հողերը և այլն: Հողակազմակերպութեան գլխաւոր կառավարչին իրաւունք է տրւում հարկաւոր կրէդիտը խնդրել յանձնաժողովներին կից երկրաչափներ և տեխնիկներ պահելու և դրամական օժանդակութիւն տալ բնակչութեանը հողակազմակերպութեան ժամանակ: 1905 թ. մայիսի 6-ին հաստատուած հողային գործերին վերաբերեալ կոմիտէն լուծւում է:

ԲԵՐԼԻՆ 6 մարտի.—Մոսկուայի գեղարուեստական դերասանական խմբի ներկայացմանը թատրոնում ներկայ էին կայսրը վիրթգեան ընդի համազգեստով, կայսրուհին, պրինց Աւգուստ Վիլհելմը, իշխան Բիւլովը, ռուսաց դեսպանը և այլք: Ներկայացնում էին «Ֆեդոր Թագաւորը». Նոյին մեծութիւնները ոգևորութեամբ ծափահարում էին դերասաններին, որոնք մեծ յաջողութիւն ունեցան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ռուսաց հեռագրական գործակալութեան հաղորդած այն լուրը թէ մտադրութիւն կայ միացնելու Մինիստրների և Պետական Խորհուրդների դիւանները՝ անհիմն են: Նշանակուած են՝ Պետերբուրգի Տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Թաւիլդարովը պետական թղթադրամների պատրաստութեան էկսպեդիցիայի կառավարիչ: Լոնդոնի դեսպանատան խորհրդական սենեկապետ Սաջոնով նշանակուած է մինիստր—րեզիդենտ վատիկանում:

ՄՈՍԿՈՒԱ. 7 մարտի. Պարապմունքներն դեռ չը վերջացած «Փոխադարձ վարկի ընկերութեան» շինութեան մէջ, որը գտնւում է քաղաքի կենդրոնում բորսային կից՝ յայտնուեցաւ ատրճանակներով սպառազինուած 25 մարդկանցից բաղկացած խումբը: Սպառնալով ծառայողներին, աւազակները յափշտակեցին դրամարկղը՝ 850.000 ռուբլիս ոսկի և թղթադրամ և անպատիժ անյայտացան: Բոլոր բանկերում մնացած ոստիկանների պահպանութիւնն ապարդիւն անցաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Օլդենբուրգեան պրինց Կոնստանտին Պետրովիչի թաղումը տեղի կունենայ մարտի 11-ին:

---

*) Հայոց մէջ պահպանողականները ծրտեղ են ապրում. կա՞ն. մենք դրանց տեղը չգիտենք. ինչ լաւ կլինէր, որ օգնէին մեզ այդպիսիների հետ ծանօթանալու համար: Խմբ.

*) Հրատարակում ենք այդպիսի մի գրութիւն իբրև բացառութիւն. երևի եթէ գրողը այստեղ յայտնի լինի, նրա բանը վատ է: Զարմանալի է մեր հայերի բանը, այդտեղ էլ հօ թաթարները չեն նեղացնում: Եթէ հայը հայի դէմ է գնում, այն ժամանակ ցանկալի էր իմանալ, թէ ո՞վ պէտք է պաշտպանէ «հային» և «հայութիւնը»: Խմբ.

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ
(Սոլոլակ, Բեբուտովսկայա փողոց, № 64 սեպհական տուն)
Հեռախօս № 230

Երթևեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնը երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ժամը 2-4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ. մասնաւոր ընդունելութիւն ամենայն օր, ժամը 9-10 առաւօտեան. վճարը 2 ր.: Ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգի: Զինուորները ձրի են: Գինեկոլոգիայի բաժանմունքը մտնողները վճարում են 1ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար, ծննդաբերական բաժանմունք մտնողները 1-5 ր. մի օրուգիշերուայ համար: Երկունքից ազատելը 10-50 ր.: Անդամահատութիւնն ըստ համաձայնութեան: Երթևեկ բոլոր հիւանդները դեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի: Զինուորների համար 1 ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և սրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի: Հիւանդանոցի տէր և տեսուչ

Մ. ՄԿՐՏՉԵԱՆ

ՇՈԳԵՆԱՒԵՐ
РУССКОЕ ОБЩЕСТВО
Пароходства и Торговли

1. Նաւերը դուրս են գալիս Բաթումից
ա. ՓՕՍՏ-ՄԱՐԴԱՏԱՐ ՆԱՒԵՐ ՄԻՆՉԵՒ ՕԴԷՍՍԱ
1) Շրջանաւոր ուղղութիւն երեքշաբթից լոյս չորեքշաբթի
2) Նոյնպէս, հինգշաբթից լոյս ուրբաթ
} Գիշերուայ ժ. 2-ին մտնելով բոլոր նաւահանգիստները:
3) Ուղիղ ճանապարհով: Շաբաթից լոյս կիրակի, գիշերուայ ժամը 2-ին, Սուխումի Գագրայի, Սօչիի, Նովոռոսիսկի, Ֆէոդօսիայի, Եալթայի և Սևաստոպոլի նաւահանգստներով:
բ. ՄԱՐԴԱՏԱՐ,
Երկուշաբթի և շաբաթ օրերը, երեկոյեան ժամը 9-ին, շրջանաւոր ուղղութեամբ, մտնելով բոլոր նաւահանգիստները:
գ. ԱՊՐԱՆՔԱՏԱՐ ՆԱՒԵՐ
Հինգշաբթի և կիրակի օրերը, կէս գիշերին:
2. Նաւերը գալիս են Բաթում
ա. ՓՕՍՏ-ՄԱՐԴԱՏԱՐ ՆԱՒԵՐԸ
Շրջանաւոր ուղղութիւն, հինգշաբթի և չորեքշաբթի երեկոները:
Ուղիղ ճանապարհով—ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 8-ին:
բ, ՄԱՐԴԱՏԱՐ ՆԱՒԵՐԸ.
Կիրակի և ուրբաթ երեկոները
գ. ԱՊՐԱՆՔԱՏԱՐ ՆԱՒԵՐԸ
Հինգշաբթի և շաբաթ առաւօտները

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ:

Լօռուայ վիճակի Յովհաննաձոր գիւղի ծխատէր Յարութիւն քահանայ Մելիքսէթեան Խաչատուրեանցը սրանով ունի յայտարարել ի գիտութիւն ընդհանրութեան որ սրանից մէկ ամիս առաջ կորել է իւր որդի Միքայէլի ծննդական վկայականը, որն ուղարկել էր մի ծանօթի ձեռքով Ներսիսեան դպրանոցի վարչութեանը, ուր ուսանում է նրա որդի Միքայէլը: Գտնողներին խնդրում է վերադարձնել, որի համար գտնողը կը ստանայ շնորհակալութիւն՝: Հասցնել Թիֆլիս կոնսիստորիային: 10—8

ՃԱՇԱՐԱՆ „ՄՈՍԿՈՒԱ“

Նոր բացուած «ՄՈՍԿՈՒԱ» ճաշարանում կան ամեն տեսակ համեղ կերակուրներ, աժան գներով: Նոյն տեղը կայ թէյ, կաթ, սուրճ, շօկոլադ, կակաօ և այլն...:
Անկիւն Հայոց բազարի և Ակիմովսկայա փողոցների՝ տուն Քաւթարաձէի, Մանթաշեանի ն. ր քարւանսարայի հանդէպ:
(117) 10—9

Չ Ք Ն Ա Ղ.
ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶԻ
խմբագրատան կից Կանանց Չքնաղ դպրոց գրաշարանոցում փետրուարի 15-ից երկրորդ դասաշրջանի աշակերտուհիների ընդունելութիւնն է, որ տևում է չորս ամիս:
Վճարն 30 ռուբլի

ԹԻՖԼԻՍ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՀԻՒՐԱՆՈՑ
ԱՆԳԼԵՏԵՐ
ՀԻՒՐԱՆՈՑԻ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ
Ճաշ՝ 2 տես. կերակուր — 50 կոպ.
Ճաշ՝ 3 » կերակուր — 60 կոպ.
Ճաշ՝ 4 » կերակուր — 80 կոպ.
Նախաճաշիկ և ընթրիք—ցուցակագրով:
Հիւրանոցում կահաւորուած սենեակներ— 1 ռուբլուց սկսած:
ՕՄԵՆՑԵՏՐ:
10—4

ՄԻԶԱՊԱՐԿԻ ԵՒ ԵՐԻԿԱՄՈՒՆՔԻ
ՀՈՆՈՐԷՅ
ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԴԷՄ
ԱՆՏԻՏՈՏԷՆ ԼՈՒԽԵՐԻ
բուսական էքստրակտ ներքին գործածութեան համար: Վաճառւում է դեղատներում և դեղատնային պահեստներում: Ներկայացուցիչը Ռուսիայի համար Է. Իւրգենս, Москва, Волхонка. Պահեստը՝ Դեղատնային Ապրանքների Կովկասեան Ընկ.
M. 25535. 12—3

Վաճառումից գոյացած ամբողջ գումարը յատկացւում է Բագուից Թիֆլիս գաղթած չքաւոր հայ գիմնազիոն աշակերտների ու աշակերտուհիների օգտին:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՒՈՒՄ Է
ՊՐՕՖ. ԿՐԻՄՍԿԻ
ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ
ՈՒ
ՆՐԱ ԱՊԱԳԱՆ
Հեղինակից յատուկ թոյլատրած
թարգմանութեամբ
ԲԱԲԿԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
(ժգ+170 երես, Գինը 60 կոպ.)
Դիմել Թիֆլիսի Գրավաճառներին
և Թարգմանչին՝
Св. Эчміадзинъ Архимандриту Бабкену
(113) 12—6